



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԱՐԿԱԾՆԵՐ ԼՈՒԱՆԻ ՎՐԱՅ

85  
7-74


*Handwritten signature or initials*

2 W 1672 31 MAY 2000


85-3  
9-74

Հրատարակեց Գ.Ա.ՓԱՆՅԻ

ԳՕԼԻԲՐԴՕ



# ԱՐԿԱԾՆԵՐ ԼՈՒՍՆԻ ՎՐԱՅ




ԹԱՐԳ. Ա.

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ԵՆԵՏՐԱԶԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ. ՊՕԼԻՑ. 7.  
1910

Handwritten text at the top of the page, partially obscured.

18 NOV 201

Հրատարակեց ՂԱՓՍՆՅԻ




70114170



# ԱՐԿԱԾՆԵՐ ԼՈՒՍՆԻ ՎՐԱՅ

514



ԹԱՐԳ. Ա.



660

1. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕԴԱՊԱՐԻԿԸ.

Մօնտէմատորիօյի վրայ փառահեղ հանդարտութեամբ օրօրուով էր պատերազմական օդապարիկը:

Հետաքրքիրների ահագին բազմութիւն էր հաւաքուել չորս բոլորը, և քթերը դէպի վեր տընկած՝ իրանց աչքերը սևեռել էին օդապարիկին: — Ի՞նչ է, ի՞նչ կայ:

— Օդագնացային պարտէզի վարչութիւնը հրաւիրում է մամուլի և հասարակութեան ներկայացուցիչներին՝ մասնակից լինելու օդապարիկի թռիչքին, մի այնպիսի նոր կատարելութեամբ շինուած... որ արմատական յեղաշրջումն է առաջ բերելու ամբողջ օդագնացային գործում... գոնէ այդպէս է հաւաստիացնում հնարողը, կապիտան Պետարդօն:

Սակայն, հաւաքուած ժողովուրդը կարծես այնքան էլ վստահ չէր այդ թռիչքի բարեյաջող վերջաւորութեան: Եւ կապիտանը — մօնօկլը աչքին, դէպի վեր դարձած երկար բթով, վերև ոլորած բեխերով մի մարդ, բոլորին էլ ամեն ցանկալի բան խոստացող, բացի մերձաւորների անձնական ապահովութիւնը — զուր էր գործ դնում անհաւատալի ջանք ու ճիգ, նայող ամ-

բութին համոզելու համար իր գիւտի նպատակա-  
յարմարութեան և յուսալիութեան:

Աղմկալից կերպով ցուցադրում էր նա իր  
գիւտը և աղաղակում.

— Գրո՞ղը տանէ: Ախր լա՛ւ նայեցէք, պարոն-  
ներ: Շինուածքը չափից դուրս պարզ է. ահա  
ներքևում, այդ բանի մէջ, որ կախ է ընկած  
գնդից, ամփոփում է սեղմուած օդով պահես-  
տարանը: Ճնշումի նուազելուն, ինքնաշարժ օրէն  
բացւում է այդ օդամբարը, շնորհիւ իմ հնարած  
մեքենական կազմին, որի գաղտնիքը ինձ է պատ-  
կանում և... որ կը փառաւորէ ինձ սերունդների  
յիշողութեան մէջ: Այդ օդամբարը, առաձգական  
ու չափազանց թեթև շինուած է երեքտակ  
ալիւմինեան թիթեղից և միացած բիւրեղեայ  
զանգակաձև կափարիչով, որը՝ ցած իջնելով՝  
ամրափակ կերպով կը ծածկէ ամբողջ կողով —  
նաւակը, հէնց որ գունդը իրան կը գտնէ ծայ-  
րայեղ աստիճանի ուսը օդի սահմաններում,  
որտեղ մարդու կեանքը այլ ևս անկարելի է:  
Այդպիսով, հինգ օրուայ համար շնչառութեան  
անհրաժեշտ օդը հոգացուած է սչ պակաս վեց  
հոգու համար, թէև կողովում կարող են և ութ  
մարդ տեղաւորուել: Ինչ որ էլ պատահելու լի-  
նի, այդ նախազգուշութեան շնորհիւ մենք չենք  
հարկադրուի քսան կամ քսանհինգ վերստ բարձ-  
րութիւնից վայր ցատկել: Քառորդ ժամից ես

կը հրամայեմ օդապարիկը բաց թողնել: Յան-  
կացողները կարող են տեղ բռնել: Համեցէք,  
պարոններ: Վախեն՞ում էք: Գրո՞ղը տանէ: Չէ՞ որ  
ես այնտեղ կը լինիմ, ձեզ հետ:

Այդ ամբողջ բազմութեան մէջ, երևում էր  
որ չը կար և մի քանի ֆունտ հերոսութիւն,  
որովհետև մեծամասնութիւնը նայում էր մէկ  
մէկու երեսի, առանց տեղից շարժուելու:

— Այդպէ՛ս, պարոնայք օրագրողներ և ուրիշ-  
ներդ, ս՛վ ինձ սիրում է, թո՞ղ հետևէ իմ օրի-  
նակին...: Մի՞թէ ոչ ոք ինձ չէ հետևելու: Ոչ ոք,  
ուրեմն, ինձ չէ սիրում:

Այդ բացականչութիւններին իբրև պատաս-  
խան տիրեց գերեզմանային լուծիւն: Ես ու  
Րատալանկան «Իշուկ» երգիծաբանական թերթի  
աշխատակիցներս, միմեանց հետ արագ հայեացք  
փոխանակեցինք:

— Մենք գալիս ենք:

Սարսափի մի ձիչ արձակեցին մեր ընկեր-  
ները. բայց մեր խիստ նայուածքը նրանց հրա-  
մայեց բարձր պահել «Իշուկ»ի պատուի դրօ-  
շակը:

— Ի՞նչպէ՛ս. իսկ Պօնտէ — մօլլէի բեստօրա-  
նում մեր նիստը: Իսկ նախաձաշիկը:

— Մենք դրանցով վերադարձին կզբաղուենք:  
Մենք այն ժամանակ կը ներկայանանք մեծ հե-  
տազօտողների ամբողջ փառքով:

կապիտանը մի փոքր անվստահութեամբ էր նայում մեր վրայ. բայց տեսնելով մեր անյող-դողդ ու հաստատակամ որոշումը, բացականչեց:

—Շատ բարի, բարձրացէք:

Պարանէ մի սանդուխ նետուեց մեր առաջ և մենք վեր ելանք:

—Գրո՞ղը տանէ,—լսուեց ծանօթ ձայնը.— եթէ յայտնուեցին «Իշուկ»ի ներկայացուցիչները, մի՞թէ չը պէտք է յայտնուի և ներկայացուցիչը... գոյութիւն ունեցող կարգերի:

Եւ ֆինանսիստ Վենտրեսկան, խոշոր սեփականատէր, արդիւնաբերող և, հասկանալի է, ակցիօնէր «Փոսնէրալէ Դիտալիա»ի<sup>1</sup>, հերոսական ճիգ թափելով ինքն իր վրայ, աչքը մեր մէջ բաց արեց:

—Որ այդպէս է,—լսեցինք մենք քթի միջից խօսող մի ձայն,—ինչո՞ւ առաջ չը շարժել և կաթոլիկական մամուլի ներկայացուցիչն:

Եւ այդ խօսքերով «Օսսերվատորէ-Ռօմանօ»ի<sup>2</sup> խմբագիրներէց մէկը, մօնսինեօր Սօտտօգօլան, ֆրասկատեան գինու տակառի նման կլորակ ու հաստափոր, խլեց մեր կողովի եզրից, ենթարկելով նրան, իսկ նրա հետ և մեզ, ժամանակից առաջ աղէտը փորձելու վտանգին:

—Բաց թողէք պարանը— գոռաց կապիտանը:

1) «Յուդարկաւորութիւն Իտալիայի»:

2) Պապական կառավարութեան պաշտօնաթերթը:

Եւ օղապարիկը վեր թռաւ արագութեամբ, մինչդեռ ցածրում հազարաւոր ձեռքեր յուսահատաբար դէպի մեզ էին բարձրանում, ահ ու դողով հրաժեշտի ողջոյններ մեզ ուղարկելով:

Մօնսինեօրը խաչակնքեց երեսը և մըթմըթաց:

—Տէր, պահեա զօղապարիկն մեր:

## II. ԵՐԿՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՉ.

Նետի պէս թռչում էր օղապարիկը:

Տարօրինակ բան: Թւում էր, թէ մենք տեղնուտեղը կանգնած ենք անշարժ, իսկ երկիրը մեր ոտքերի տակ կայծակի արագութեամբ միշտ ցած ու ցած էր իջնում:

Յանկարծ գերապայծառ Սօտտօգօլան, «Օսսերվատորէ Ռօմանօ»ի խմբագիրը, անսպասելի անհանգստութեամբ կապիտանին դիմելով հարցրեց.

—Իսկ ուտելիքի մասին ի՞նչպէս...: Դուք արդեօք մեզ սովից չը կոտորելու համար էլ մտածե՞լ էք:

—Հանգիստ եղէք. մենք ութ օրուայ ուտելու պաշար ենք վերցրել:

Մօնսինեօրը պայծառացաւ և զգուշութեամբ թեքուեց կողովի եզրին, նայելով դէպի ցած



փախուստ տուող անդունդին: Յանկարծ նա բա-  
ցականչեց.

— Ողորմած Աստուած. ցած նայեցէք, այն-  
տեղ, մըջիւններ են կարծես...: Իրանք արքա-  
յական հեծելագորքերն են...: Եւ այստեղից դեռ  
երևում է նրանց գոռոզ մեծամտութիւնը, այս-  
քան բարձրութիւնից...: Ահա գեներալ Պելլուի  
փետրագարդ սաղաւարտը... հը, սվայստեղից կը-  
ճանաչէ նրան: Օ՛ մարդկային սին ունայնութիւն:

Բայց ֆինանսիստ Վենտրեսկան այդ մասին  
ուրիշ կարծիքի էր, և անկուշտ աչքերով նայե-  
լով դաշտերին, որոնք կարծես արևի տակ փը-  
ռուած վառ կերպասի կտորներ լինէին, քրթն-  
ջում էր.

— Ինչ խելք ու միտք թուցնող դաշտեր: Տէր  
Աստուած, ինչ հրաշալի կալուածներ:

— Հապա Ս. Պետրոսի տաճարը... այստեղից  
նա պարզապէս ընկոյզի կեղևի չափ է երևում:  
Ո՛րքան խեղճ ու կրակ է թւում կաթոլիկու-  
թեան այս զարդը:

Բայց մօնսինեօրը իմ վրայ սպանիչ հա-  
յեացք արձակեց, բոլորովին հակառակն ապա-  
ցուցանող:

— Հանդարտուեցէք, հանդարտուեցէք, իմ  
պատուական: Մենք գտնուում ենք գրեթէ 2,000  
մետր բարձրութեան վրայ. այստեղ մենք կա-  
րող էինք թողնել մեր թշնամութիւնը...

— Ներքև՝ նայեցէք, այնտեղ, Ս. Պետրոսի  
տաճարի կողքին մի ամբողջ կարտօնէ տուփ,  
տեսնում էք: Ահա և ահարկու Սան-Ուֆֆիցիօ  
պալլացօն, որտեղ շինում են ամենատեսակ պայ-  
թուցիկ նիւթեր... իսկ այնտեղ, աւելի ցածրը,  
նայեցէք աւելի վար, Պիացցայի և Սպանիի  
մօտ, «Պրօպագանդա Ֆիդէ»<sup>1</sup> տունը...: Տե-  
սէք ահա այն մանր սև մըջիւնները, հոգևոր  
հայրերը, որոնք սողում են աշխարհ կոչուող  
գնդի վրայ. նրանք ամեն տեղ աչք են ուղղում,  
քարոզելով, որ անբովանդակելի աշխարհը մեզ  
համար է ստեղծուած, և թէ Տէր Աստուածը  
երկնքի անհուն բարձրութիւնների մէջ գոյու-  
թիւն ունի միայն նրա համար, որպէս զի նայէ,  
թէ ինչպէս այդ կարմիր քղամիջներով մարդիկ,  
որոնք ահա խմբուել են այն անկիւնում և  
կոչւում են կարդինալներ, զբաղուած են միայն  
սպասելով՝ որ իրանցից մէկն ու մէկը երբ կը  
փոխէ իր քղամիջը և կը դառնայ սպիտակա-  
զգեստ մարդ, պապ անունը կրող...:

Յանկարծ, մի քանի վերստ հեռաւորու-  
թեան մէջ, փոթորիկ պայթեց մեր վրայ:

Մօնսինեօրը բռնեց իմ հերետիկոսական

1) Միսիօներական հաստատութիւն, 1622 թ. հիմնը-  
ւած հեթանոսների մէջ քրիստոնէութիւն տարածելու  
նպայտէս և հերետիկոսութիւնը ոչնչացնելու համար:

ուսերից, որոնց վրայ այդ դէպքում երևի աւելի յոյս էր դնում, քան մի ուրիշ բանի վրայ աշխարհում: Կապիտանը նայում էր դիտակով:

—Մենք Կաստելլի Ռօմանիի վրայ ենք: Արևի տակ պլավացող ահա այն ջրի երկու կաթիլները Ալբանեան ու Նելլի լճերն են: Իսկ հեռուն, այն հսկայական զանգուածը, Ս. Ագուլիա եկեղեցին է...: Այդպէս մենք բշտում ենք դէպի ծով: Այդ ճիշտ է...

Եւ գունտը՝ գլուխ պտտեցնող արագութեամբ շարունակ տարւում էր բարձր ու բարձր: Մեր ներքեր ծովը փայլիլում էր ինչպէս մի վիթխարի ցոլացուցիչ:

—Մօնսինեօր, հիմա նայեցէք...: Ինչ կասէին հաւատաքննութեան սուրբ հայրերը, եթէ իրանց գտնէին այսպիսի բարձրութեան վրայ:

—Իսկ ի՞նչ կասէին նրանք:

—Պարզապէս կասէին, թէ երկիրը կլոր է:

—Աստուած իմ, այդ ահա՞ որոշ կերպով երևում է:

—Սակայն այդ տարօրինակ յայտնութիւնը նրանց համար պէտք էր, որ սիւրբարիզ լինէր: չէ՞ որ նրանք կարծում էին, թէ երկիրը տափակ է, և հաւատացնում էին, որ հէնց այդպէս էլ ստեղծել էր Տէր Աստուած...:

Մօնսինեօր Սօտօգօլայի ճակատը սկսում էր մթազնել:

—Բայց ամենքին էլ յայտնի է, որ հին ի-

մաստուններից մի քանիսն էլ այդ կարծիքի էին:

—Օհօ. բայց գրագ կը գամ, որ կապիտան Պետարդօն այլ ևս չէ ճանաչում աստուածուստները՝ նշուած Մովսէսին...:

Սակայն կապիտանը տրամադրուած չէր երևում վէճի բռնուելու. ուստի գիտական ամբողջ այդ խօսակցութիւնը նա թողեց անուշադիր: Բայց պարոն Վենտրեսկան ուրիշ կարծիքի մարդ գուրս եկաւ: Թէև նա Ջօրդանօ Բրունօյի<sup>1</sup> առաջ խոնարհում էր, բայց այդ նրան չէր խանգարում Վատիկանի ու Կլիրինալի<sup>2</sup> ներկայացուցիչների հաշտութեան մասին հոգալու: Բացի դրանից, նա տոգորուած էր այն գիտակցութեամբ, որ իր վաճառականական գործերի շահերի տեսակէտից՝ մէկի փոխարէն՝ աւելի լաւ է երկու կլիէնտ ունենալ:

—Ընդհակառակը... այդտեղ կարելի է հաշտութիւն կայացնել...: Լիովին ուղիղ է, որ հրները երկինքը համարում էին տափակ և տիեզերքի կենտրոնում գրուած. բայց այդ բանում

<sup>1</sup>) Իտալացի հոչակաւոր փիլիսոփայ. կրօնի դէմ իր անխնայ քննադատութիւնների պատճառով, ինկվիզիցիայի կողմից խարոյկի դատապարտուեց: (1550—1600)

<sup>2</sup>) Վատիկանը Հռոմի պապի արքունիքն է, իսկ Կլիրինալը՝ իտալական թագաւորի: Իտալիայի ազատութեան օրից սկսած մինչև այսօր, այդ երկու պետերը միմեանց հետ խռով են:

նրանք մեղաւոր չէին...: Բանն այն էր, որ գիտութիւնը դեռ չէր հասել...

Մինչ այդ, Բատալանդան, — որը այլ կերպ չէր խօսում, բայց եթէ Լուկրեցիոս Կարի<sup>1</sup> բերանով, — հանդիսաւորութեամբ կարդում էր բանաստեղծի ոտանաւորները այն մասին, թէ «նչ մի բան երբէք ոչնչից չի ծնուի», և թէ ամեն ինչ առաջ է եկել նիւթից, այն էլ առանց որեւէ կողմնակի միջամտութեան:

Մօնսինեօրը այնպէս կուշ եկաւ կողովի մէջ, որ սրանում ամեն բան ցնցուեց:

Կապիտանը գոռաց.

— Հանգիստ նստեցէք, զրոյր տանէ ձեզ:

Ադրիականի մէջ լողանալ էք ցանկանում, ի՞նչ է:

Այդ պահուն, մեր ներքեւ մթնագոյն ամպեր էին կուտակուում:

— Մօնսինեօր, ես սարսափելի կերպով վախենում եմ, որ փոթորիկը բռնէ մեզ:

— Անպատճառ:

— Փոթորիկ ու մրրիկ, որոտ ու կայծակով:

— Այստեղ, ընդհակառակը, ո՞չ մի վտանգ չը կայ, — պատասխանեց կապիտանը. — ես կանխատեսութեամբ այդ և ուրիշ բաներ նկատի ունեցել եմ: Մեր օդապարիկի վրայ մենք կարող

<sup>1</sup>) Հռոմէական հանճարից բանաստեղծ. Ք.ից մէկ դար առաջ: Հեղինակ փիլիսոփ-պօէմայի «Թրերի բնութեան մասին»:

ենք շանթարգել հաստատել, դիտմամբ այդ բանի համար վերցուած...:

Մօլեգնօրէն տարւում էին թուխպ ամպերը, սոսկալի ուժգնութեամբ պտտուելով ու կծկելով մեր ներքեւում: Քամին հալածում էր նրանց՝ մօտեցող հողմայոյզից փախչող թռչունների նման: Կայծակները փայլատակում ու շառաչմամբ կտրատում էին ծանր ու մռայլ մթնոլորտի ստորին խաւերը: Նրանց լայն զիզազները մեր ֆինանսիստը — գործնական, ինչպէս միշտ — համեմատում էր Տրանսիլաւի ոսկեբեր հանքային երակների հետ: Ներքեւում անթափանցելի էր դառնում մթութիւնը, այն ինչ մեր զլխավերկը օդը մնում էր կատարելապէս մաքուր ու պարզ և արևը պայծառօրէն փախչում էր բարձրութեան մէջ:

Յանկարծ, սակայն, թաթառը մեր վրայ էլ թռաւ, փաթաթելով մեզ մշուշով: Հոլի նման պտոյտ եկաւ գունդը խաւարի մէջ. կայծակները, օդը կտրատելով, կարծես ծեծում էին նրան ամեն կողմից խարազաններով, ժամանակ առ ժամանակ շառաչելով ինչպէս հըլթիո:

— Մօնսինեօր, մենք մեզ այժմ ձեզ ենք յանձնում. սկսեցէք ձեր աղօթքները:

Բայց մօնսինեօրը, ամեն ինչ մոռացած ու սոսկումով համակուած, շշուշում էր:

—Կապիտան, շանթարգելը... աղերսում եմ  
ձեզ, դրէք շանթարգելը:

### III. ԱՆՀՈՒՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Մի սաստիկ ցուրտ զգացինք յանկարծ, և  
մեզ տիրեց ինչ որ անբացատրելի մի զգացո-  
ղութիւն: Բայց այդ իսկոյն պարզուեց. կապի-  
տանը ջանք էր անում բաց թողնել մեր վրայ  
բիւրեղեայ կափարիչը և գործողութեան մէջ  
դնել օդամբարը: Նոր հիասթափում... օդերևու-  
թաբանական բնաւորութիւն ունեցող.— գործիք-  
ները չէին հնազանդուում:

Իսկ մենք բարձրանում ու բարձրանում  
էինք:

Սոսկալի մրրիկը, որ մի քանի ընդ-  
թացքում մեր գոյութեան շարունակութիւնը  
կասկածելի էր դարձրել, այժմ այդ բարձրու-  
թիւնից թռում էր բամբակի մի քուլայից ոչ  
աւելի, որի մէջ փայլփլում էին ոսկեղէն թելեր.  
դրանք այնքան ահարկու կայծակներն էին:

Մենք բարձրանում էինք ահռելի արագու-  
թեամբ:

Երկիրը յստակօրէն դուրս էր երևում ան-  
հուն տարածութեան մէջ, յիշեցնելով մի հըս-  
կայական գունդ, անտառներով ու գետերով

կտրատուած: Եւ ահա վրայ էր հասնում խաղաղ  
ու պայծառ գիշերը:

—Իրօք որ կլոր է,— քրթնջում էր մօնսինեօրը:

—Հէնց այդքան. նա կլոր է նրան քառա-  
կուսի համարող հաւատաքննութեան սուրբ հայ-  
րերի գլուխների նման:

—Իսկ պտղօմէոսեան զբուլթիւնը, որ դեռ  
մինչև այսօր ընդունուում է թոմայական ամե-  
նայարգ աստուածաբաններից, դնում է նրան—  
հողն ու ջուրը— տիեզերքի կենտրոնում և շրջա-  
պատում նրան երկու այլ տարրերով—օդով ու  
կրակով:

—Խեղճ Կոպերնիկ ու դժբաղտ Գալիլէյ,  
որոնք հաւատում էին՝ թէ նա պտտուում է:

—Այդ բոլորը միմիայն ապացոյց է գիտու-  
թեան աղքատ լինելուն Յաւիտենականի իմաս-  
տութեան հետ համեմատած,— դուրս թռաւ մօն-  
սինեօրի բերանից:

—Կեցցեա: Իսկ ի՞նչ կասէք այն անթիւ  
անհամար էակների մասին, որոնք հաւանօրէն  
բնակուում են այն միլիօնաւոր աստղերի մէջ,  
որ մենք տեսնում ենք մեր չորս բոլորը այս  
հրաշալի լուսափայլ գիշերուայ մէջ:

Այդ միջոցին կապիտանը յաջողել էր օդամ-  
բարը իր պարագաներով գործողութեան մէջ  
դնելու:

Մօնսինեօրը արհամարհական մի շարժում

գործեց և սկսեց հանուել, բոլորովին հոգ չը տանելով իր արտաքինը պահպանելու, որ համապատասխան էր նրա հոգևոր աստիճանին. նամայ միայն տակի ճերմակեղէններով և տեղաւորուելով քնել, բացականչեց.

— Աստղերի բնակիչներ...: Այդ ինչ յիմաթիւններ էք դուրս տալիս: Աստղերի բնակիչներ, այդ արդէն հրէշաւոր է:

Եւ այդ խօսքերով մտաւ հինգ ճօճքերից մէկի մէջ, որ իւրաքանչիւրս կախ էինք արել կողովի մէջ, կապիտանի ցոյց տուած տեղերում:

Մենք բոլորս հետևեցինք նրա օրինակին:

Ամենից յետոյ պարկեց Ֆինանսիստ վենտրեսկան, որ յափշտակութեան հասած հիացմունքով երկար նայում էր աստղազարդ երկնքին, որի վրայ ամենուրեք մեր չորս կողմը վառուում ու փայլփլում էին բիւրաւոր լուսաւորները մուգ կապուտակութեան մէջ:

Ֆինանսիստը ձեռքերը միաւորեց ու բացականչեց.

— Ո՛րքան քսան ֆրանկանոցներ<sup>1</sup> կան այդտեղ:

Եւ այդ բանաստեղծական մտածմունքով նա էլ, վերջապէս, մտաւ իր ճօճքը:

1) Ոսկէ դրամ:

Մենք արդէն առաւօտ կանուխ մեր քիւրը կայցրել էինք ապակուն, անհամբերութիւնից այրուելով տեսնելու համար, թէ «ինչպէս է վեր կենում Արշալոյսը Տիտանեան անկողնից»: Բայց ցածրում ոչինչ չէր երևում:

— Գրո՞ղը տանէ, երկիրը անհետացել է:

— Ա՛յ քեզ բան:

Ֆինանսիստ վենտրեսկան, շանթահար եղածի պէս, հարցական կերպով թոթովեց.

— Երկիրը անհատացե՞լ է:

Մենք գուշակեցինք նրա թաքուն մտքերը:

— Երևի ձեր ամբողջ դրամարկղով նա կծիկը դրել է զէպի Շվեյցարիա:

— Եթէ Շվեյցարիա փախած լինի, դեռ ոչինչ... Բայց ո՞վ գիտէ, եթէ նա յանկարծ փաստօրէն հաւաքած լինի մի որևէ ուրիշ մոլորակի վրա՞:

— Չէ՞ որ աստղերի վրայ էլ, — մըթմըթած մօնսինեօրը, — մարդիկ են բնակուում:

— Անպատճառ: Դժբախտութիւնն այն է, որ աստղերի բնակիչները դեռ ևս չեն հպատակած պապի իշխանութեան: Ի՞նչպէս է լինելու այն ժամանակ նրանց հոգիների փրկութիւնը:

— Հերիք է, հերիք. ծաղու առարկայ կը դարձնենք մարդկային խելքին անհասանելի գաղտնիքները:

— Իսկ ո՞վ գիտէ՞ կը գայ և այն օրը, երբ կը

բայցուին ամբողջ ստեղծագործութեան գաղտնիքները:

—Ճշմարտութիւնը Աստու մօտ է. եթէ նա յարմար դատէ նրան յայտնել, նա կը յայտնուի:

—Օ՞ մօնսինեօր, դուք կարո՞ղ էք ասել, թէ քանի քանի հազարամեակներ հարկ եղան համոզելու համար մարդկան այն տարրական ճշմարտութեան, թէ երկիրը մոլորակ է: Իսկ եթէ մարդկային գիտութեան տարածումը այսպէս դանդաղ առաջ ընթանայ, մի՞թէ դուք չէք ասի, որ ճշմարտութիւնը պիտի յայտնուի անվերջօրէն հեռաւոր ասպագայում:

—Իսկ դուք ի՞նչ էք կարծում, մտքի այդպիսի յաղթանակը արդեօք բարձր կը լինի:

—Բարիք կը լինի՝ թէ չարիք, այդ միևնոյն է, մօնսինեօր. բայց այդ կը լինի, յամենայն դէպս, ճշմարտութիւն: Իհարկէ նա Վատիկանից հեռու կը լինի, կամ թէ բնաւ էլ չի լինի...:

—Ի՞նչ էք ասում դուք:

—Ես պարզապէս այն եմ պնդում, որ դուք ձեր սեփական յարմարութեան համար հնարել էք մի այնպիսի երկիր, որ անշարժ գետեղուած է տիեզերքի կենտրոնում և տափակ է, ինչպէս տախտակը, այնպէս որ նրա վրայ կարելի է կանգնեցնել երկնային վրանը... մինչդեռ Դեմոկրիտէսն ու Արիստոտէլը հաստատել են, որ

երկիրը մի գունդ է, տարածութեան մէջ ազատօրէն կախ ընկած:

Կապիտանը դարձաւ մեզ դէմքի մի այնպիսի արտայայտութեամբ, որի մէջ անհետացել էր հերոսութեան ամեն նշոյլ:

—Սիրելի պարոններ, դուք այդտեղ տարուել էք շատախօսութեամբ ու զատարկաբանութեամբ, իսկ ես պարտաւոր եմ խոստովանել, որ այլ ևս ոչինչ չեմ հասկանում...: Ձեմ ասի, թէ ես վախեցած եմ, բայց երկիրը եմ կրում, որ մի գուցէ մեր թռիչքը տխուր վախճան ունենայ...:

—Մենք ձեր իշխանութեան տակ ենք,— նկատեց մօնսինեօրը հառաչելով:

—Ձեր իշխանութեան տակ...: Ո՛չ, աւելի լաւ է ասէք, որ մենք նախախնամութեան ձեռքումն ենք:

—Այդպէս ուրեմն. իսկ յետո՞յ, յետո՞յ... մի՞թէ մեզ մխիթարելու ոչ մի խօսք չունիք:

—Բայց բանն այն է, որ ես այլ ևս անկարող եմ մեր օդապարիկը կառավարել. նա դէպի վեր է թռչում հրէշաւոր արագութեամբ:

—Աստուած իմ. և մենք վերջի վերջոյ ուր կը թռչենք:

—Սակայն... ո՛ւր ենք թռչում:

Կապիտանը ձեռքերով բռնեց գլուխը:

—Սարսափելի մի նախազգացում. մենք

տարւում ենք... ուղղակի լուսնի վրայ:

Մի բոպէ ճնշող լուսթիւն տիրեց:

Ֆինանսիստ Վենտրեսկան առաջինը խզեց այդ լուսթիւնը:

— Գոնէ լուսնի վրայ, վերջի վերջոյ, հնարաւոր լինէր մի որ և է արդիւնաբերութիւն կազմակերպել...

— Աւանդ, — մըթմըթաց մօնսինեօրը, — դեռ լուսնին չը հասած մենք քաղցից կը մեռնենք:

— Ցաւն այն է, գրոգը տանէ, — բացականչեց կապիտանը, — որ մեզ հետ պատահած ֆենօմենային երևոյթը խորտակում է իմ բոլոր գիտական հմտութիւնները: Մենք այլ ևս անկարող ենք չափել մեր թռիչքի արագութիւնը: Մեր բոլոր արտաքին յարմարեցումները փակուած են և մեզ անմատչելի: Մենք ինքներս էլ, մեր ապակեայ կափարչի տակ, չենք նկատում մեր թռիչքի սաստկութիւնը: Մինչդեռ այդ թռիչքի սաստկութիւնը պէտք է, որ հրէշաւոր լինի...: Մտածեցէք միայն, որ էլեկտրական կայծը երկրից մինչև լուսին հասնում է մէկ ու կէս վայրկեանում... իսկ եթէ մեր վրայ ներգործում է այժմ լուսնի ձգողութիւնը...

— Ողորմեցէք:

— Ահա մենք թռչում ենք այնտեղ այնպիսի արագութեամբ, որ մի քիչ պակաս է...

Բատալանգան ձեռքերը տարածեց դէպի

երկինք... այսինքն դէպի մեր օդապարիկը, և կարծես աչքերով մեր գիշերնների լուկ ուղեկցին որոնելով.

— Ո՛վ լուսնի բարեպաշտ բնակիչներ... զգուշացէք մեզանից:

#### IV. ԱՂԵՏ

Յանկարծ մեր իւրաքանչիւրի կրծքից միաժամանակ դուրս պոսթկաց մի հառաչանք. մենք զարնուեցինք մի ինչ որ բանի: Վայրկենական տեղութիւն ունեցող մի զարհուրելի շառաչիւն և ամեն ինչ ոտնի վեր թռաւ: Մի տարօրինակ հարուած էլ, կարծես մի առաձգական պատի, և այդ հարուածը մօնսինեօրին շարտեց կապիտանի գիրկը: Մի հարուած ևս և ահա, գերապայծառը թռաւ Բատալանգայի գիրկը, յետոյ մի նոր՝ հանդարտ ցնցում, մի քանի ակնթարթ տևող, և հուսկ յետոյ, — կատարեալ անշարժութիւն:

Սարսափով համակուած, մենք ակնապիշ նայում էինք միմեանց: Չարմանալի բան: Մեր գունդը հանդարտ ձօձուում էր օդում, հարիւր քայլ հեռաւորութեան վրայ: Մենք էլ ամենքով նստած էինք գետնի վրայ, քթերս կախ ձգած և կարծես խօսակցողների մի շրջանակ կազմած:

Նստել էինք ամենափափուկ խոտէ գորգի վրայ,  
գունագեղ անուշաբոյր ծաղիկներով պճնուած:

— Մենք զրախոսումն ենք, բացականչեց մօն-  
սիները:

— Նոր նուաճուած երկիր, — գոչեց կապի-  
տանը:

— Ոսկու աւազներ չեն արդեօք, — հարցրեց  
Ֆինանսիստը:

— «Իշուկ» ի համար լաւ կերակուր է, — ասա-  
ցինք մենք, գրպաններիցս հանելով այրումներ  
ու մաախաներ:

#### Վ. ԼՈՒՄՆԻ ՎՐԱՅ

Ընդարձակ, շքեղատեսիլ ու զմայլելի են Վա-  
տիկանեան խեղճ բանտարկեալի<sup>1</sup> պարտէզները,  
ինչպէս և Լանչելոտտի գերգաստանինը (Ֆրաս-  
կատի դժբաղդ անդրկաթոլիկեան իշխաններ, ո-  
րոնք աղքատներին միշտ համողում են հաշտուել  
իրանց չքաւորութեան հետ), կամ վերջապէս  
կարգինալ Ալգորրանդինիի պարտէզները հոռ-  
մէական բլուրների վրայ: Բայց ի՞նչ ասել մի  
հրաշալի, անընդհատ պարտէզ ներկայացնող այդ  
լուսնային համայնապատկերի մասին, նկարա-  
գեղ լճերի վերածուած այն տափարակների,

<sup>1</sup>) Ակնարկում է պապին:

զրախոսը յիշեցնող այն պուրակների մասին: Դուք  
ե՞րբ էք տեսել նմանօրինակ մի բան: Ե՞րբ և որ-  
տեղ, հարցնում եմ ձեզ, բացուել է ձեր աչքե-  
րի առաջ այնպիսի առատութիւն ու զանազա-  
նութիւն լոյսի, գոյների, անուշահոտութեան,  
անթիւ դաշտավայրերի և ալիքանման բլուրների  
վրայ սփռուած, որոնք, ինչ որ տեղ, անվերջ  
հեռաւորութեան մէջ, ձուլում են հորիզոնի ար-  
ծաթափայլ գծի հետ:

— Ինչ վերաբերում է ինձ, — ասաց կապի-  
տանը, և սկսեց բեխերը ոլորել ըստ վերջին  
նորաձևութեան, — ես չեմ կարող ենթադրել, որ  
մենք լուսնի վրայ ենք գտնուում:

— Բայց միևնոյն ժամանակ այդ այդպէս է...

— Մատանան գիտէ, թէ ինչ է: Իմ բոլոր  
ծանօթութիւններս հակասում են այդ բանին...

— Գալով ինձ, միևնոյն է ինձ համար, թէ  
ինչ բան գիտէք դուք, և ի՞նչ չը գիտէք, — խառ-  
նուեց խօսակցութեան մօնսիները. — փաստն  
այն է, որ մենք ողջ առողջ դուրս եկանք լուսնի  
վրայ, որտեղ ես ինձ այնքան վատ չեմ զգում:

Այդ միջոցին մեր մօտերքը, ծաղիկներով  
դարդարուած թփերի յետևից, հնչուեց մեզմ  
ծիծաղ, և նոյն իսկ, կարծես ո՛չ թէ ծիծաղ,  
այլ աւելի շուտ լսուեցին արծաթաճնչիւն զան-  
գակների ձայներ:



Հէնց այդ ըոպէին էլ մեզ էին մօտենում մի քանի կենդանի էակներ: Նրանք մեզ ողջունեցին քաղաքավարութեամբ, թէև ակնյայտ էր, որ նրանք դժուարանում էին սքօղել իրանց ապշութիւնն ու ծիծաղը, որ առաջ էին բերում նրանց մէջ մեր զգեստները: Նրանց ծիծաղ էին պատճառում յատկապէս գերապայծառի վերարկուն և կապիտանի նշանազգեստի փայլուն կոճակները:

Մենք վերցրինք գլխարկներս, կապիտանը գինուորական ձևի պատիւ տուեց, մօնսենիօրն էլ խորին կերպով գլուխը խոնարհեց այս խօսքերով.

—Շնորհն աստուածային եղիցի ի վերայ ձեր:

Բացայայտ էր, որ մօտեցողներին հետաքրքրում էր մեր գիմապատկերների զանազանակերպութիւնը, մինչդեռ մենք, մեր կարգին, ծայրայեղ ապշութեամբ նայում էինք նրանց տարօրինակ կերպարանքներին: Նւ ապշելու էլ բան կար: Մի կողմից, եկողները նման էին երկրային բնակիչներին, բայց ընդհանուր առմամբ, նրանք ներկայացնում էին ինչ որ միջին բան օրանդ - ութանգների և մարդկանց:

Նրանց աչքերը վառվռուն էին և աստղերի պէս փայլփլում. գլուխները շատ աւելի մեծ, քան սովորական մարդկանցը. մազերը աչքի էին

ընկնում մետաքսանման փայլունութեամբ ու փափկութեամբ, և առանձնապէս խիտ էին գլխի վրայ. փոքրիկ, թարմ ու վարդի կոկոնի պէս անուշաբոյր բերանը ծածկում էր ատամները ոչ բոլորովին. սրածայր քիթ, որի վրայ համարեա աննկատելի էին նուրբ ու խիստ թափանցիկ բուռն-գերը: Բայց նրանց սպիտակ դէմքերի վրայ, շագանակագոյն մօրուքով զարդարուած, ամբողջովին սփռուած էր մի այնպիսի անդորր ու ինքնավստահ հոգեշունչ արտայայտութիւն, որ մեզ հարկադրում էր, հէնց առաջին ըոպէից, կարմրել մեր սեփական ամբողջ էութիւնը համակող կոպտութեան վրայ:

Նոյն իսկ կապիտանը, որ մի քանի ըոպէ առաջ այնպէս ինքնահաւանութեամբ ու հպարտութեամբ ոլորում էր բեխերը և դնում իր մօնօկլը, այժմ կարծես իրան զգում էր խոր կերպով ստորացած:

Այս անօրինակ էակների մի քանիսի ուսերի յետևից կպցրած էին ահագին թևեր, և երբ նրանց տէրերը չէին շարժում, այդ թևերը շնորհալի կերպով դէպ առաջ էին թեքում, ծածկելով նրանց ամբողջ մարմինը: Այդ էակները աչքի էին ընկնում մարմնի վայելչակազմութեամբ և օդայնութեամբ: Փոքերը մեծ չէին. ոտքերը բարակ, իսկ գարշապարները անսովոր կերպով մանր: Նրանց վրայ հագուստներ ու գլխարկներ չը կային, որոնք կարող էին ծածկել մարմնա-

կազմի հիանալի ներդաշնակութիւնը: Այդ բոլորին փոխարինում էին նուրբ ու գոյնզգոյն շաւերը, և խօսակցութեան կամ շարժմունքների ժամանակ այդ էակները շնորհաշուք կերպով կարողանում էին փաթաթուել նրանցով:

## VI. ԿԱՊԻՏԱՆԻ ԿԱՏԱՂՈՒԹԻՒՆԸ

Նրանցից մէկը, որ ըստ երևոյթին աւելի հեղինակութիւն էր վայելում, բայց աչքի ընկնում սչ թէ շքանշաններով կամ գերազանցութեան ուրիշ արտաքին նշաններով, այլ իր փառաշուք տեսքով և իր դէմքի ազնուութեամբ, մեզ մօտեցաւ բոլորովին ու խօսեց մեր լեզուով:

— Բարի եկաք, մեր երկրային բարեկամներ: Գուք ազատ Լուսնի վրայ էք:

Առաջին րոպէին մենք խորապէս ապշած մնացինք և սակայն այդ մեզ չը խանգարեց աւելի ապշահարուելու:

— Ինչպէս, դուք խօսում էք իտալերէն:

Պատուելի ծերունին—այդպէս պէտք էր ընդունել նրան աւելի իր փառահեղ, արժանապատուութեամբ լի կերպարանքից, քան թէ դէմքի խորշոմներից ու մարմնի զառամութիւնից— ժպտաց ու ասաց:

— Մեր մէջ լինելով՝ դուք դեռ շատ բաների վրայ պիտի զարմանաք, և ձեր սակաւշարժ ու ծանրաքաշ խելքին դժուար պիտի լինի մի բացատրութեամբ հասկանալ բոլորը միանգամից:

Իր գործասնեակում մեծ յարգանքներ վայելելու—սովոր ֆինանսիստի դէմքը փոքր ինչ մթազնեց «ծանրաքաշ խելք» բառերի վրայ, իսկ կապիտանը խրոխտ դէքք ընդունեց, որպէս մի մարդ, որ բոլորովին հակամէտ չէ անարգանքներ լսելու:

— Ծերուկ, — դոչեց նա, ձեռքը սրին տանելով իսկոյն, — մտածիր, թէ ինչ ես խօսում:

Ապշանքի մի աղաղակ սլացաւ Լուսնի բնակիչների միջով, բայց ծերունին ձեռքի նշանով հանգստացրեց իր ուղեկիցներին, կրկին ծիծաղեց և խօսեց հաստատ ձայնով:

— Զինուոր, յիշիր, որ այստեղ հերոսներ չը կան: Եւ եթէ նրանք չը կան, այդ նրա համար է, որ մենք չենք ցանկանում:

— Ուրեմն դուք երկչոտների հաւաքածու էք, — բորբոքուած բացականչեց կապիտանը, և ձեռքի մի արհամարհական շարժում գործեց:

— Երկչոտներ... հերոսներ...: Իրանք մեզ համար անհասկանալի արտայայտութիւններ են, որովհետև նրանք որոշում են, անձնական ու հասարակական իմաստով, կատարելապէս վայ-

րենի ու նախնական մի վիճակ:

Այդ արդէն կապիտանին վերջնականապէս պայթեցրեց:

— Ուրեմն— գոչեց նա— երկչոտութիւնը Լուսնի վրայ համարուում է սխրագործութիւն: Իսկ մեզանում, երկրի վրայ, որի գինուած ներկայացուցիչը լինելու պատիւն ունիմ ես այստեղ, հերոսութիւնը ամենաբարձր առաքինութիւնն է:

Ծերունին, միշտ ժպտալով, նկատեց.

— Իսկ մեզանում գիտութիւնը յաղթանակել է թէ երկչոտութեան և թէ հերոսութեան: Մենք ոչ ոքից երկիւղ չունենք, և ոչ ոքի չենք վախեցնում: Մենք միայն սիրում ենք:

— Ձեր գիտութիւնը յիմար է, եթէ նա կարողացել է ընկճել մարդու մէջ ամենաազնիւ յատկանիշը, — անվեհերութիւնը:

Ծերունու աչքերում փայլատակեց կրակը: Այն վիրաւորանքներին, որոնք միայն իր վրայ էին թափուում անձնապէս, նա վերաբերուում էր անտարբերութեամբ, բայց սյոժմ, ակներև էր, որ նա գրգռուեց երբ արդէն այդ վիրաւորանքները ուղղուած տեսաւ ընդդէմ գիտութեան, որ իր սրբութիւնն էր:

— Ինչ քիչ ես չափազանց յիմարը, — խրատութեամբ յարեց պատուարժան ծերուկը, — և ես այդ կապացուցանեմ քեզ:

Կատաղութիւնից ինքն իրան կորցրած, կապիտանը մերկացրեց սուրը:

— Ինձ այդ տեսակ նախատինքնէր: Գրողը տանէ. եթէ այդ բանը իմ գնդի ընկերները իմանային:

Եւ սուրը ձեռքում շարժելով՝ կապիտանը դէպի ծերունին մի քայլ արեց ու գոռաց.

— Ես քեզ ցոյց կը տամ, թէ ի՞նչ բան է երկրային քաջութիւնը, լուսնային վիժած: Ես քեզ մանրաբրդուճ կը շինեմ:

Այդ խօսքերով նա սկսեց յարձակումը: Իսկ ծերունին, անհաւատալի, լիովին պատանեկական ճարպիկութեամբ մի կողմ ցատկեց, իր ուղեկիցները մէկի ձեռքից խլեց մետաղեայ մի բարակ գաւազան, մի ծայրը երախակալով, և դէպի մեզ դառնալով՝ նրան դիպցրեց կապիտանի ձեռքին:

Սարսափի ու կատաղութեան մի ճիշ արձակեց մեր ռազմասէր երկրացին. սուրը ձեռքից ընկաւ, իսկ ինքը գլորուեց խոտի վրայ և սկսեց օձաձկան պէս գալարուել. մինչդեռ ծերունի լուսնաբնակիչը, դեռ շարունակելով դիպցնել գաւազանը կապիտանի մարմնին, ծիծաղելով բացականչում էր.

— Ահա նրանք, այդ հերոսները:

Մենք մէջ մտանք ազատելու մեր բանակի դժբաղդ ներկայացուցչին. վերջապէս ծերունին բարձրացրեց իր գաւազանը, իսկ այդ միջոցին

նրա րոպէական հակառակորդը վեր կացաւ. տանջուած ու կատարեալ ջղային խանգարման մէջ: Ձեռքը նրան պարզելով՝ ծերունին ասաց.

— Տեսնում էք, ահա մի փոքրիկ ելեքորական գործիք, որի օգնութեամբ մի ժամանակ մենք ոչնչացնում էինք վայրի գազաններին, որոնք այժմ բոլորովին անհետացել են լուսնային անտառներէր: Մենք այդ մեզ հետ դիտամբ էինք վերցրել, քաջ գիտենալով՝ որ մեզ այցելում են այնպիսի կենդանի էակներ, որոնց մէջ դեռ շատ բան է պահպանուել մեր անխելք նախահայրերից:

Այդ բացատրութիւնը միանգամից հեռացրեց մեր ուշադրութիւնը աչքներէս առաջ հէնց նոր տեղի ունեցած պատերազմասիրական միջադէպից:

— Ի՞նչպէս, — բացականչեցինք մենք. — մի՞թէ դուք տեղեկութիւն ունէիք մեր գալու մասին:

— Պարզ բան է...: Մենք ինքներս ձեզ այստեղ բերինք:

### VIII. ԼՈՒՍՆԱԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ.

Մեր ապշութիւնը հասել էր ծայրագոյն աստիճանին. բայց Րատալանգան, յանկարծ իր վրայ վերցնելով միջնորդի դերը մեր և լուսնաբնակիչների միջև, հարցրեց.

— Ներեցէք, իմ թանկագին... Ի՞նչպէս է ձեր անունը:

— Պէնսիէրօ<sup>1</sup>:

— Շատ գեղեցիկ, շնորհակալ եմ ձեզ...: Ներեցէք, սինեօր պենսիէրօ...

Ծերունին յօնքերը կիտեց.

— Սինեօր, մեզանում սինեօրներ չը կան:

— Դուք իրաւացի էք, ներեցէք իմ անգիտութիւնը...: Ես ինձ թոյլ եմ տալիս նկատելու, որ մենք, երկրի բնակիչներս, միշտ կարծել էինք, թէ Լուսինը անբնակ է, և չէ կարող բնակելի լինել:

— Այդ ինձ բնաւ չէ զարմացնում: Ապա, դրա փոխարէն, մէկ նայեցէք, ժողովրդի ինչ բազմութիւն է խոնուում ահա այստեղ: Ո՞չ... դուք նայեցէք աւելի հեռուն. այստեղ մենք գտնուում ենք անմարդ, ամայի վայրում: Դրա պատճառը յետոյ կիմանաք: Աչք ածեցէք այստեղ, աւելի հեռուն...:

Մենք մեր տեսողութիւնը սկեռեցինք ցոյց տրուած ուղղութեան կողմը և նշմարեցինք անթիւ անհամար ամբօխ լուսաբնակիչներին, որոնք հաւաքուում էին մի ահագին պավիլիօնի շուրջ, որի վերին ծայրերը կորչում էին երկնքի ասասման բարձրութեան մէջ:

<sup>1</sup> Պենսիէրօ, իտալերէն նշանակում է՝ միտք:

Օգուժ, գրեթէ ամեն ուղղութեամբ տարու-  
բերուում էին զանազան մեծութեան օդային կառ-  
քեր, և ընթանում էին գրեթէ տասն անգամ ա-  
ւելի արագութեամբ քան Պարիզի բուլւարներում:

— Տօնական պալիլիօն է դա, — ասաց ծե-  
րունին: — Ամեն կողմից հաւաքուում են այդտեղ  
լուսնաբնակիչները, անգաղար միմեանց փոխա-  
րինելով, համաձայն իւրաքանչիւրի տրամադրու-  
թեան, թէ ում ինչն է զբաղեցնում, գիտական  
աշխատանքը, թէ զուարճութիւնը: Իմացէք, որ  
այնտեղ ներկայացումները երբէք դադար չեն  
առնում:

Բատալանգան մատիտով գծազրեց ցոյց տը-  
րուած անսովոր շինութեան արտաքինը, որի բաց  
գոներից լուսնաբնակիչները ներս էին թռչում,  
հրճուանքից դողդողացող աղաւնիների նման:

— Զարմանալի բան: Զուարճութեան համար  
յատկացրած շինութիւն ուղղակի բաց դաշտի  
վրայ: Ինչո՞ւ համար նա քաղաքումը չէ:

— Քաղաքում, — ծիծաղելով բացականչեց  
ծերուկը: — Քաղաքներ: Մարդկային այդ հրէշա-  
ւոր մը շնանոցները: Վարակիչ հիւանդութիւնների,  
ամենատեսակ աղտեղութիւնների և անառակու-  
թեան այդ սարսափելի ու դարձելի որջերը: Ո՛չ  
ոչ, մենք քաղաքներ չունենք: Մեր բնակարան-  
ները ցրուած են այս ու այն կողմ լուսնային  
լայնատարած պարտէզներում: Նրանց մէջ ապ-

րողները ճաշակի և հակումների համաձայն՝ նրանք  
կառուցուած են առանձնակի, կամ փոքրիկ խում-  
բերով: Մանաւանդ որ, քաղաքները ի՞նչ բանի  
են պէտք, երբ մեր հաղորդակցութեան միջոց-  
ները, չը հաշուած թռչելու համար իւրաքան-  
չիւրի տրամադրութեան տակ եղող թևերը, ան-  
հատնում կերպով առատ ու անսահմանօրէն յար-  
մար են:

— Բայց և այնպէս, — շարունակեց Բատա-  
լանգան, յիշելով վաղուց դէն ձգած իր աստղա-  
բաշխական տեղեկութիւնները, — ես երբէք չէի  
կարծում, որ հնդկական իմաստուններից «պաղ  
աստղ» կոչուած մոլորակի վրայ թագաւորում է  
զուտ հոմէական կլիմայ: Ճիշտ է, մեր ջերմա-  
ցոյցները դեռ վճռած չեն ձեր մոլորակից ար-  
ձակուող տաքութեան հարցը, սակայն ինձ, այ-  
սու հանդերձ, անհասկանալի է մնում մթնոլոր-  
տի ու ջրի գոյութիւնը այստեղ, Լուսնի վրայ:

— Իսկ չէ՞ որ ձեր Նելսօնը, — պատասխանեց  
ծերունի լուսնաբնակիչը, — արդէն գտել է, որ  
մեզանում մթնոլորտ կայ, որը երեք հարիւր  
անգամ նուազ խիտ է, քան ձեր երկրային մթ-  
նոլորտը: Նոյնպէս և Յեօլները յայտնագործել է  
մեր սառցալեռները:

— Ա՛յ քեզ բան: Ես տեսնում եմ, որ զուր  
իմանում էք մեզանից ոչ պակաս, ինչ վերաբե-  
րում է...

—Օ՛հ, այն, մենք դեռ շատ զանազան բաներ գիտենք, շատ ու շատ աւելի, քան ձեզ յայտնի է:

Մօնսինեօրը կասկածանքով գլուխն օրօրեց:

—Իսկ ձեզ յայտնի է ձեր աշխարհի ծագումը:

—Անտարակոյս: Եւ մինչև իսկ ձեր աշխարհինն էլ: Բոլոր աշխարհները միևնոյն ծագումն ունեն:

Մօնսինեօրը յաղթական հայեացքով նայեց բոլորի վրայ և բացականչեց.

—Ա՛հ, ահա այստեղ, բարձրութիւնների մէջ, ահա սրտեզ է ճշմարիտ լուսաւորութիւնը: Կեցցես, պարոն լուսնաբնակիչ: Ուրեմն, ձեր Լուսինը ստեղծուած է...

—Նիւթից, ինչպէս և բոլոր ֆնացեալները:

—Նիւթից, նիւթից: Սակայն շահագրգիռ է գիտենալ, թէ ինչ կերպով...

—Շատ հասարակ կերպով: Լուսինը երկրի ուղեկիցն է, նրանից պոկուած հէնց այն ժամանակ, երբ երկիրը դեռ ևս գտնուում էր մշուշային վիճակի մէջ: Երկիրը, իր սկզբնական արագ շարժման մէջ, Լուսնին շարժել է հեռու տարածութեան մէջ: Այդ բոլորից միլիօն դարեր են անցել, մինչև որ երկիրն ու Լուսինը վերջիվերջոյ խտացել և իրանց այժմեան տեսքն են

ստացել, ինչպէս այդ ապացուցուած է երկրաբանութեամբ...

—Պարոններ, —բացականչեց մօնսինեօրը կատաղութեամբ, —եթէ դուք ինձ ձեռք էք առել, ես կը հեռանամ...

—Դէպի երկիր, այնպէս չէ՞. բայց դա մօնսինեօր, մի քիչ վտանգաւոր կը լինի, և դուք բացարձակապէս ոչ մի տեղից օգնութիւն սպասել չէք կարող:

### VIII. ՕԴԻ ՄԷՋ ԶԲՕՍԱՆՔ

Մօնսինեօրի հոգեկան վատ տրամադրութիւնը մէկէն ցրիւ եկաւ, երբ յանկարծ մեր գլուխների վրայով սրացաւ մի օդային նաւ:

—Դա ի՞նչ բան է:

—Դա «ձեպընթացն» է, ինչպէս ասում են ձեզանում: Նրա վրայ պատանիները թռչում են դէպի սինէմատօգրաֆիական դպրոցը:

—Օ՛հ, մենք էլ նրանց հետ գնանք...: Կանգնեցրէք նաւը:

—Դա լաւը չէ, —ասաց ծերունին: Մենք կը գնանք աւելի յարմարաւոր ու նուազ արագընթաց նաւով:

Եւ դառնալով դէպի մի լուսնաբնակիչ, որ բացայայտ երանութեամբ հանգստանում էր իր թևերի վրայ, ծերունին ինչ որ բան ասաց նրան

մեզ անհասկանալի լեզուով: Նա բարձրացաւ, թևերը բաց արեց ու անհետացաւ օդեղէն տարածութեան մէջ:

Րատալանդան օգտուեց այդ դադարից իր հարցուփորձը շարունակելու համար:

— Սիրալիբ եղէք և ներեցէք, եթէ ես ձեզ անհանգստացնում եմ, ասացէք խնդրեմ, ճիշտ է, որ ձեր մոլորակի խտութիւնը և տեսակարար ծանրութիւնը կ'իսով չափ պակաս է քան մեր մոլորակինը:

— Լաւ, ի՞նչ կը լինի որ:

— Եւ ձեզանում մ'իջնորրա չը կայ շնչառութեան համար...

— Բայց չէ՞ որ դուք ահա շնչում էք:

— Հէնց այդ է զարմանալին: Եւ այստեղ, ձեր հողի վրայ, ձգողութեան աւելի պակաս ոյժի պատճառով, մարմինները պէտք է, որ շատ աւելի թեթև լինեն, քան երկրի՞ վրայ:

— Անշուշտ. ձեր երկրագնդի վրայ մարդիկ աւելի ծանրաքաշ են...

— Յայտնի բան է. օրինակի համար, պարոնայք Սօննինո, Տօրրակա, Ռուդինի<sup>1</sup>: Բայց ինչո՞ւ համար Լուսինը, որ այժմ ներկայացնում է բուսականութեան, ջրի, կենդանի էակների այսքան առատութիւն, մեր երկրային դիտողնե-

1) Դրանք իտալացի յայտնի քաղաքական գործիչներ են:

րին թւում է այնքան ամայի ու դէն ձգուած, իր ընդարձակ անապատներով, իր հովիտներով, որոնք յիշեցնում են հանգած հրաբերանների նման մի բան, և որոնք մեր աստղաբաշխներից կոչւում են ծով խաղաղութեան, ծով պայծառութեան ևն, ևն, անուններով, և իր անբերրի ու մերկ լեռներով: Նրանցից ահա այս ամենամեծը մեր հռչակաւոր Լէյքնիցի անունն է կրում:

— Շատ ու շատ բաներ, իմ թանկագին երկկրաբնակիչ, քեզ կը թուին այստեղ, այս սահմաններում, տարօրինակ ու անհասկանալի:

— Սակայն, ես բնաւ չեմ ցաւում, որ այստեղ ընկայ, — նկատեցի ես: — Լուսինը միշտ համակրելի էր ինձ համար, մանաւանդ այն ժամանակից, երբ ես կարդացի արկադեան բանաստեղծներին, որոնք անմահացրել են նրան, ինչպէս՝ «Օդային ձգնաւոր, արծաթեայ խաղաղ լուսատու»:

— Արծաթը, սակայն, թոյլ տուէք նկատելու, մէջ խառնուեց ֆինանսիստը, — այժմ ընկնում է արժէքից...: Իսկ ես, մեր Լէօնարդիի պօէմայի՝ «Թափառական հովիւ»-ի հետ՝ մեծ կարեկցութեամբ լցւում եմ ամեն անգամ, երբ աչք եմ ձգում Լուսնի վրայ:

— Ներեցէք պնդերեսութեանս, — ասացի ես, — բայց դուք մեզ դեռ չը բացատրեցիք, թէ ինչո՞ւ Լուսինը մեր երկրային հեռագիտակների մի-

Չով երևում է բոլորովին այլ կերպ, քան թէ ինչպէս որ է իսկապէս:

— Ահա հէնց այդ, — ասաց ծերունին ու ժըպտաց, — այդ... մեր գաղանիքն է...

— Որ մենք երբէք չե՞նք իմանալու:

— Ես այդ ձեզ կը հաղորդեմ, ձեզ, «Իշուկ» երգիծաբանական թերթի աշխատակիցներէրդ, այն պահուն, երբ ձեր երկիր վերադառնալու ժամանակը կը դայ: Բայց այդ ես ձեզ կասեմ մի պայմանով, որ դուք այդ գաղանիքը ո՛չ ոքի չէք հաղորդելու, որպէս զի ո՛չ ոք չիմանայ, թէ ի՞նչ հրաշքներ են լինում աշխարհումս:

Մենք մեր ձեռքերը դրինք սրտներինս վրայ և բացականչեցինք.

— Երգւում ենք օրագրողի պատուով:

## XI. ՄՕՆՍԻՆԵՕՐԻ ՓՈՐՍՅԱԻԸ.

Ինչ այս, մինչ այն, մօնսինեօր Սօտտօ-գօլան ու Ֆինանսիստ Վենտրեսկան մի կողմ էին քաշուել և դաւադիրները նման խորհրդակցում էին կիսաձայն ինչ որ բանի մասին:

— Յետո՞յ, ի՞նչպէս անենք, մօնսինեօր:

Յարգելի գերապայծառը, իր ամբողջ ոյժը հաւաքելով, մօտեցաւ մեզ.

— Բանն այն է, որ... ահա... մենք խօսե-

ցինք պարոն Ֆինանսիստի հետ... որ այստեղ ուտելու բան չը կայ:

Մեր ուղեցոյցը ծիծաղից թուլացաւ:

— Ներեցէք, թանկագին երկրաբանակիչներ, դուք կատարելապէս ու անպայման կերպով իրաւացի էք: Բայց պէտք է գիտենաք, որ մենք ուտելու կարիք չունենք, ահա այդ պատճառով էլ ես մոռացայ ձեր պահանջների մասին:

— Զարմացրից՝ կապիտանը մինչև իսկ մի ստում գործեց կանգնած տեղում:

Դուք չէ՞ք ուտում: Բայց չէ՞ որ ուտելը մարդուս ամենալաւ բաւականութիւնն է:

— Իհարկէ այդ այդպէս է ստորին կարգի էակների համար. բայց մենք՝ կենդանական բաւականութիւնների փոխարէն՝ ձգտում ենք շատ աւելի բարձրագոյն, այսինքն հոգեկան, մտաւորական վայելքների:

— Ինչ վերաբերում է անձնապէս ինձ, — նկատեց Վենտրեսկան, — մակարօնի և հաւի ճուտի մի բաժին կերակուրը իմ աչքին աւելի բարձր է Բեթհովէնեան սիմֆօնիայից, կամ Դանստէի երգերից:

— Երբ դուք սոված էք, — նկատեց լուսնաբնակիչը: Բայց երբ իրանց մասին չեն զեկուցանում ո՛չ կողորդը, ո՛չ էլ ստամոքսը, կերակուրը կորցնում է իր նշանակութիւնը: Ինչ մեզ է վերաբերում, մենք ամեն առաւօտ մի շատ



փոքր բաժին խտացրած սննդեղէն ենք ընդունում, և այդ կատարելապէս բաւական է մեր կազմուածքի համար, որ այդ բանին խիստ լաւ կերպով յարմարուած է: Մենք չունենք մարսողութիւն ու աղիքներ, որոնք մեզ համար բացարձակապէս աւելորդ բաներ են թւում:

Այդ բոլորին ժամանեց ուղարկւած լուսնաբնակիչը մի ոչ մեծ օդային նաւով, որ նա դանդաղօրէն իջեցնում էր մեզ մօտ:

— Լաւ կը լինի, — ասաց ծերունին քաղաքավարութեամբ, — եթէ դուք հէնց այստեղ ճաշէք: Որքան էլ մեր ժողովուրդը ծանօթ է կենդանիների զարգացման զանազան աստիճանների հետ, այսու հանդերձ մարդկային կերակրասեղանի պատկերը կարող է հասարակութեան մէջ չափազանց մեծ ծիծաղ յարուցանել:

Այս խօսքերի վրայ կապիտանը նորից ձեռքը տարաւ սրին, բայց ելեկարական գաւազանի վերջիշումը իսկոյն պահեցրեց նրա ռազմասիրական ամբողջ աւիւնը:

— Չէ որ ձեր օդապարիկում, — նկատեց լուսնաբնակիչը, — դեռ ուտելու պաշար ունիք. մեր ընկերը թևերի երկու թափահարումով կը թռչի այնտեղ, կը բերէ, և դուք կարող էք ուտել այստեղ: Իսկ յետոյ մենք ձեզ կը տանք այն կերից, որ անասունների համար ենք պահում:

Կապիտանը կրկին կորցրեց իրան և ցաւկեց իր տեղում:

— Անասունների կեր:

— Ներեցէք, ես բոլորովին ձեզ վիրաւորելու ցանկութիւն չունէի: Ես ասացի, որ մենք կերակուր չենք ուտում, բայց Լուսնի վրայ կան ստորին կարգի էակներ. նրանք էլ սնւում են այնպէս, ինչպէս դուք. դրանք են՝ շները, եղները, մանր տաւարը: Նրանց համար էլ մեղանում պատրաստում են ուտելիքի պաշարներ:

Մօնսինեօրը հաշտարար կերպով ասաց.

— Քանի որ խօսքը ուտելու մասին է, անձնական արժանապատուութեան հարցը կորցնում է իր ոյժը:

Թռչող լուսնաբնակիչը արդէն վերագործել էր ու տեղաւորել խոտի վրայ մեր օդապարիկում գտած բոլոր ուտելեղէնները: Մենք նստեցինք ճաշելու, — ճիշտ է մի քիչ ոչ առանց ստորացած զգացմունքի, որովհետև մեզ շրջապատող լուսաբնակիչները այդ տեսարանի հանդէպ չէին ծածկում իրանց բուռն հետաքրքրութիւնը: Միւս կողմից էլ, մեր ծերուկը նրանց զանազան բացատրութիւններ էր տալիս մեր մասին. ակներև էր, որ այդ առթիւ նա զետեղում էր մեզ կենդանաբանական սանդուխի ոչ այնքան պատուաբեր աստիճանի վրայ:

— Ներեցէք, — ասացի ես, ուտելով մի մսի

կառը և ցանկանալով առաջքն առնել որ և ի-  
ցէ նոր գրգուռմի կապիտանի կողմից, որ ար-  
գէն յաջողել էր իր ախորժակով լուսնաբնակիչ-  
ների առանձին հետաքրքրութիւնը գրաւել իր կող-  
մը, — ի՞նչ էք հաղորդում այդ քաղաքացիներին...  
Թէ՞ գիւղացիներին:

— Ես նրանց բացատրում էի, որ դուք չէք  
կարող ապրել երկնային այնպիսի բարձրութիւն-  
ների վրայ, ուր միջնուրդը կամ նօսը է, կամ  
բնաւ գոյութիւն չունի:

— Իսկ դուք անա ապրում էք:

— Իհարկէ, մենք օդի կամ թթուածնի կա-  
րիք չենք զգում: Ծնչառութեան գործողութիւնը  
մեզ համար ինքնին աւելորդ է, մինչդեռ ան-  
պայման անհրաժեշտ է նա ստորին էակներին, ո-  
րոնցից կան և Լուսնի վրայ:

— Օ՛, ի՞նչպէս էք դուք այդ ասում, այդ-  
պէս հարևանցի կերպով...

Ծերունին ծիծաղեց:

— Մեզանում, — ասաց նա, — լորձնային թա-  
ղանթը բնաւ չէ գործավարում. մարմնի արտա-  
քին մասերի արիւնը ցրտից ոչ մի փոփոխու-  
թեան չէ ենթարկւում, և այդ պատճառով, մենք  
կարող ենք համարեա զրօյի վերածել հագուստը,  
որ այնքան հարկաւոր է աւելի պակաս զարգա-  
ցած օրգանիզմների համար:

Մօնսինեօրը յօնքերը կիտեց ու ասաց.

— Սակայն, հագուստը անհրաժեշտ է ոչ մի-  
այն մարմինը եղանակներից պաշտպանելու հա-  
մար, այլ միևնոյն ժամանակ և ամօթխածու-  
թիւնը պատսպարելու:

Երկու թէ երեք սիրունատես լուսնաբնակ-  
չուհիներ, որոնք ամբողջ ժամանակ ուշադրու-  
թեամբ հետևում էին մեր խօսակցութեան. ըն-  
թացքին, աւելի մօտ եկան ու հարցրին.

— Սիրելի Պենսիէրօ, ի՞նչ բան է ամօթխա-  
ծութիւնը:

Մօնսինեօրը նայեց ծերունուն ու կարմրեց:  
Յետոյ նա սկսեց պատմել աղջիկներին Ս. Ալ-  
ֆօնսի վարքից մի էջ: Բայց ծերունին, մի մատը  
շրթունքներին տանելով, նկատեց.

— Ամօթխածութիւնը երկրային բնակիչներին  
նախապաշարումներից մէկն է, անա այս կեն-  
դանիների, որոնք ամենից աւելի անբարոյական  
են աշխարհում ապրող բոլոր էակներից. մարդ-  
կանց համար բարոյականութեան կանոնները  
միշտ ծառայում են այն բանին, որ աւելի մեծ  
յաջողութեամբ առաջ բերեն ստորաքարշ մտած-  
մունքներ:

— Բայց ի՞նչ էք ասում դուք, — բացականչեց  
մօնսինեօրը. — մի՞թէ դուք պիտի սկսէք հաւա-  
տացնել, թէ մարմինը ծածկելը անբարոյական  
սովորութիւն է:

— Չեզանում, ի հարկէ, ոչ. որովհետև մար-

մինը ծածկել արդէն անհրաժեշտ է դառնում կլիմայական պայմանների պատճառով: Բայց դա անբարոյական բան կը լինէր մեղանում, քանի որ այդպիսի անհրաժեշտութիւն մեզ համար բնաւ գոյութիւն չունի: Լուսնային աղջիկները հարցասիրութիւնը այդ ճիւղում՝ այս առաջին անգամն է, որ երևան է գալիս. այնպէս չէ: Եթէ ես սխալուում եմ, դուք բացատրեցէք այդ նրանց:

— Ուրեմն, ձեր կարծիքով, պէտք է մեզ վերադառնալ մարդկային նախնական վիճակին, — յուսահատաբար բացականչեց մօնսինեօրը:

— Ո՛չ, — պատասխանեց ծերունին, ո՛չ թէ նախնական, այլ կուլտուրական: Ամեն մի զգեստ, որ անհրաժեշտութեամբ չէ պայմանաւորուած, ուրիշ բան չէ, բայց եթէ անհեթեթութիւն, և այն էլ անբարոյական անհեթեթութիւն: Իսկ միանգամ որ հագնուելու անհրաժեշտութիւնը այլ ևս իր ոյժը կորցրել է, պարզապէս անբարոյական բան կը լինի հագնուելը. որովհետև այդ դէպքում, ճարպիկօրէն հաշուի առնուած ամեն տեսակի ծածկոյթների տակ՝ առաջ պիտի գան այնպիսի բաներ, որոնք պիտի համարուեն արգելուած, մինչդեռ իսկապէս նրանք միայն բնական են և բնաւ չը պէտք է առաջ բերեն անամօթ մտածմունքներ:

Մօնսինեօրը վերջին ծայր շփոթուած էր,

և նրա հոգու մէջ տարակուսանք ծագեց, թէ արդեօք Ս. Ալֆօնսի փրկիսփայութիւնը արմատական բարենորոգումների կարօտ չէր:

Մինչ այդ, մենք փառաւոր կերպով ճաշել էինք, և օգանաւը մեզ ներկայանում էր այժմ իբր գերազանց միջոց լաւ մարսողութեան համար:

Մենք դէպքից օգտուեցինք, և առանց դանդաղելու ցատկեցինք օգանաւի վրայ մեր առաջնորդի յետևից, որ տեղաւորուեց նրանում կարելի եղածին պէս յարմար կերպով:

Մենք հէնց այդտեղ նկատեցինք, որ օդի մէջ թռչելու համար այդ բոլոր շինուածքները, — որոնցով մենք ամեն կողմից շրջապատուեցինք շուտով, — չը նայելով իրանց զանազանակերպ արտաքիններին, հիմնուած էին թռչուններին նրմանուելու միևնոյն սկզբունքի վրայ, և նրանց ղեկերն ու թևերը շարժման մէջ էին դրուում էլեքտրականութեամբ:

#### Ճ. ԼՈՒՍԻՆԸ՝ ԹՈՒՉՆԱՅԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԻՑ.

Թռչում էր մեր օգանաւը, և այն ամենը, ինչ որ մենք նրա վրայից տեսնում էինք, գնալով աւելի և աւելի էր սաստկացնում մեր զարմանքը:

Մեր ներքեր, ահագին տարածութեան վրայ,

ձգւում էին մարգագետիններ ու բլուրներ, զմայլելի բուսականութեամբ ձոխ պարտէզների վերածուած, որոնց միջից դուրս էին ցցուել դալարացած ու միկնոյն ժամանակ կարծես երկաթեայ քէօշկեր, — մասնաւոր անձնաց շէնքերը: Այդ տները կառուցուած էին առանձին կամ խումբերով. երբեմն էլ երևում էին հասարակային նըշանակութիւն ունեցող հսկայական ու վերին աստիճանի շքեղազարդ շինութիւններ:

Բայց ամենից աւելի մեզ շանթահարեց բընութեան և արուեստի լիակատար՝ կարծես ներքին ձուլումն ու միախառնութիւնը. միախառնութիւնն այնքան իդէալական, որ հեշտ չը պիտի լինէր որոշել, թէ որտեղ էր վերջանում մէկը, և որտեղ էր սկսում միւսը:

Տներն ու ասպարանքները թւում էին իբր բնական զարգացումն ու շարունակութիւնը բնութեան: Փառահեղ անտառները, իրանց պերճաշուք տերէներով իրար հիսուած և կամ իրանց բարեկազմ կատարները իրար հաւաքած՝ ծաղկասուն գմբէթներ կազմելու համար, հարկադրում էին մտածել, թէ նրանք մարդկային ձեռքի արուեստական արտադրութիւններ էին. միւս կողմից շէնքերն էլ, կանաչով ու ծաղիկներով զարդարուած, ներկայացնում էին կարծես բոլորովին բնական արտադրութիւնը բնութեան:

Հոյակապութիւնն ու միաժամանակ թեթե-

ւութիւնը այդ երկնաբերձ շինուածքների, որոնք անհրաժեշտ դէպքում կարող էին իրանց մէջ տեղաւորել մի քանի հազար կենդանի էակներ, այնպէս էին, որ մենք կարմրում էինք մտաբերելով մեր արուեստը, երկրային չնչին գործունէութեան ծանրաքաշ և հատուկտոր արդիւնքները: Մենք կաբմրում էինք այն մտքի առաջ, թէ մեր տեսածների հետ համեմատելով՝ որքան խղճուկ բեկոր է ներկայանում մեր արուեստը, որի վրայ սակայն ինչքան ժամանակ, որքան հոգեկան եռանդ է սպառուել, և որը վերջի վերջոյ բացառապէս կատարի պայքարով է պայմանաւորուում ամենօրեայ մի կտոր հացի համար:

Ծերուկը, երևի գուշակեց իմ մտքերը, որովհետև ասաց.

— Կատարելապէս ուղիղ է: Ծշմարիտ կուտուրան հաստատ հող է գտնում այն վայրկեանից, երբ մարդը դադարում է կեանքի նիւթական կարիքների մասին հոգալուց ու մտածելուց: Մինչև այդ վայրկեանը մարդկութիւնը ապրում է միայն իր գոյութեան անդրպատմական ժամանակաշրջանով:

Այդ պահուն մենք թռչում էինք մի ամբողջ շարք հսկայական աշտարակների վրայով, որոնք կատարելապէս թեքուած էին զանազան կողմերի վրայ:

— Դրանք ի՞նչ են:

— Դրանք ժողովրդական աստղաբաշխական հիմնարկութեան հեռագիրտակներն են: Դրանցով դիտում են այն ազդանշանները, որոնք գիշերները տրւում են հեռաւոր աստղերից:

— Ուրեմն, — բացականչեց մօսսինեօրը, — միւս աստղերն էլ բնակիչներ ունեն:

— Անթիւ անհամար կերպով: Դուք բաւական քիչ տեղեկութիւն ունիք. մենք յաճախ ուղևորութիւններ ենք կատարում դէպի այդ աստղերը:

Մեր ապշութեանը չափ ու սահման չը կար:

— Դուք թռչում էք տարածութեան մէջ աստղերից անտղ:

— Յայտնի բան է: Իսկ եթէ մենք անկարող ենք այցելել համարեա բոլոր մոլորակները, դրա պատճառը ո՛չ այլ ինչ է, բայց եթէ ժամանակի պակասութիւնը և ո՛չ թէ տեղից տեղ գրնալու դժուարութիւնը: Եթէ կեանքը անվերջ լինէր, մեր այցելութիւնները տիեզերքի մեր եղբայրակիցներին անսահման կը լինէին:

— Բայց այդ դէպքում, — բացականչեց Րատալանգան, — ինչո՞ւ համար դուք երբէք չէք թռչել երկրի վրայ:

Ծերունին ժպիտով ասաց.

— Այդ պարագան ես խոստացայ ձեզ պարզել, երբ դուք կը պատրաստուէք հեռանալ մեր միջից:

Մենք հասանք տեղ: Նաւը հանդարտ իջնում էր մի սքանչելի հարթավայրի վրայ, որի մէջ տեղ բարձրանում էր անազին մեծութեան մի շէնք, բացառապէս երկաթից ու ապակուց կառուցուած:

Ուրախ պատմներին երևաւ աղջիկների բազմութիւնը ամեն կողմերից սլանում էր դէպի այդ դպրոց — թատրոնը:

— Ի՞նչ հիանալի է, — բացականչեց Ֆինանսսիստ Վենտրեսկան, դուրս գալով օդանաւից. — զմայլելի է: Եւ ո՞ւմ է պատկանում այդ անսովոր հաստատութիւնը:

— Ոչ ոքին, կամ եթէ ցանկանում էք, ամենքին, ինչպէս և այն բոլորը, ինչ որ տեսնում էք և դեռ կը տեսնէք Լուսնի վրայ:

Ֆինանսսիստը՝ սեփականատիրոջ իր զգացման մէջ՝ մի քիչ իրան խայթուած զգաց ու բրթմնջեց.

— Այն ժամանակ ուրեմն կարելի է ապրել Բօտշիլդի նման: Դրա համար այստեղ պէտք չեն և նրա եկամուտները:

Մտնելով ընդարձակ սրահը, որի մէջ Ս. Պետրոսի գմբէթը կը տեղաւորուէր այնպիսի հեշտութեամբ, ինչպէս որ հէնց նոյն տաճարի մէջ տեղաւորուում է Բերնինիի ամպնովանին, — կապիտանը չորս կողմը նայեց ու ասաց.

— Ներեցէք, բայց դալով առողջապահութեան, մենք շատ ու շատ առաջ ենք անցել: Հոռմում

չը կայ հասարակաց այնպիսի վայր, որտեղ դուք չը տեսնէք գրուած՝ արգելում է գետնի վրայ թքել:

Ծերունին ծիծաղեց իր սովորական բարեհոգի ծիծաղով.

— Իսկ այդ, պարոն զինուորական, առաջ է գալիս նրանից, որ մենք բնաւ չենք թքում:

— Է՛, այդ արդէն չափազանցնում էք:

— Հաւատացնում եմ ձեզ: Մենք մարտողութեան հարկից կատարելապէս ազատուած ենք, և ի մասնաւորի լորձային գեղձերի օգնութեամբ օսլան շաքարի վերածելու հարկից. այդ պատճառով լորձային գեղձերը մեզանում բոլորովին հիւծուած են:

Կապիտանը ժամանակ չունեցաւ մի բան ընդդիմախօսելու, որովհետեւ մեր յայտնուելը անսովոր իրարանցում առաջ բերեց ամբօխի մէջ, որ ամեն կողմերից վազվզել սկսեց: Մեր ուղեցոյցը իսկոյն հասկացաւ մեր դրութեան անյարմարութիւնը, որովհետեւ, ձայնագրական գործիքի շնորհիւ, նրա մէն մի բացատրութիւնը ամենուրեք լսում էր. գործիքը ծայրագոյն աստիճանի սաստկացնում էր ձայները, նրանց հնչեցնել տալով շէնքի բոլոր սրահներում:

Սակայն, սարսափը փոխուեց հետաքրքրութեան, որի առարկան էինք մենք բաւական երկար ժամանակի ընթացքում:

— Այստեղ պատահում է նոյնը, — բացատրեց ծերուկը, — ինչ որ տեղի կունենար ձեր թատրոններից որ և է մէկում, եթէ պարտէրում անսպասելի կերպով յայտնուէին գօրիլլաներ կամ շիմպանզէներ<sup>1</sup>:

Ճիշտ է, այդ համեմատութիւնը մեզ համար այնքան էլ շողոքորթիչ չէր, բայց ծերունին արագ ուղղուեց դէպի մի շքեղ դահլիճ, որը, մի ինչ գուտ որ ճարտարապետական քմահաճոյքով, կրոպական ոճով էր շինուած:

Շարունակ աճող մեր զարմանքը զրաւում էր ծերունուն:

Դպրոց-թատրոնը, — շէնքի մէջ գետեղուած բազմաթիւ հաստատութիւններից մէկը, — մութ էր, բայց մի լուսաւոր սկաւառակ, գրեթէ երեսուն մեթր երկարութեամբ մի պատից, արձակում էր մեզմ լոյս, որի շնորհիւ կարելի էր գանազանել հազարաւոր լուսնաբնակիչներ, որոնք յարմար կերպով ամփիթատրոնաձև իրանց տեղերը բռնած էին ահագին մեծութեան էքրանների առաջ:

## XI. ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍ.

Դասն սկսուեց:

Հէնց որ սինէմատօգրաֆիական էքրանի վրայ երևում էին ծրագրում նշանակուած պատկեր-

<sup>1</sup>) Կապիտան տեսակներ:

ները, դասախօսն էլ նրանց մասին բացատրութիւններ էր տալիս սովորական ձայնով, որը սակայն, ինչ որ պատճառով, բարձր էր հնչուում դահլիճի հեռաւոր անկիւններում:

— Այդ ի՞նչ է նշանակում:

— Այդ ձայնաբանական երևոյթ է, արուեստական կերպով առաջ եկող:

— Ապեջցուցիչ բան: Բայց նա ի՞նչ է խօսում:

Մինչ պրօֆեսօրը խօսում էր, մեր ուղեցոյցը թարգմանում էր մեզ նրա բացատրութիւնները մեր լեզուով:

Մենք լսեցինք հետեւեալը.

«Լուսնային մարդը, դանդաղ ու աստիճանական վերածնութեան ճանապարհով, կատարելապէս բնական եղանակով, վերակազմուեց այժմ արդէն մեր մոլորակի վրայ անհետացած նախնական մարդու տեսակից, որը, սակայն, դեռ գոյութիւն ունի մի քանի աստղերի վրայ և մեր հարևան Երկրում:

«Այդպէս, լուսնային մարդը տարբերում է երկրայինից այն չափով, որչափով որ վերջինս տարբերում է կապիկից:

Այդ բոպէին կապիտանին տիրեց նրանում սովորական եղող ռազմասիրական նախերգանքներից մէկը, բայց պրօֆեսօրը շարունակեց իր խօսքը.

«Այդ երեք տեսակների օրգանական ազգա-

կցութիւնը հաստատուում է առանց մեծ աշխատութեան. երկրային ու լուսնային մարդիկ չունին կատարելապէս նոր ու միայն իրանց յատուկ օրգաններ. նրանք չունին այնպիսի օրգաններ, որոնք չը լինէին — թէկուզ սաղմնային վիճակում — մնացեալ կաթնասուն կենդանիների մէջ:

«Մեր նախընթաց գրոյցների ժամանակ (բոլոր մեր տեսածներից թուում էր, որ Լուսնի վրայ գիտութեանը նայում են ինչպէս մի զուարճութեան վրայ) մենք տեսանք այն անդամազննական առանձնայատկութիւնները, որոնցով պայմանաւորուում է մեր մարմնակազմը, այժմ էլ անցնենք նրա արտաքին տեսքի քննութեան: Մենք այդ կանենք գիտութեան համար մանաւանդ այն մեծ օգտի նկատումով, որ բազմը բարեհաճեց բերել այստեղ երկրային մարդկանց մի քանի օրինակներ, որոնց անտարակոյս ահագին բաւականութիւն կը պատճառէ նպաստել մեր ծանօթութիւնների հարստանալուն:

«Ի նկատի ունենալով, որ բազմը մեր տրամադրութեան ներկայացրեց մեր նախնիքների կենդանի օրինակը, ես ինձ թոյլ եմ տալիս մի քիչ կանգ առնել նրա արտաքին պատկերի հրէշաւորութեան վրայ:

«Նայեցէք մարմնի այդ փխրուն ու ճարպոտ կոյտին, դիտեցէք այն զուտ կատուային ատամ-

ները, որոնք կանխանշանակուած են գոհացում տալու այդ կենդանու մսեղէն կերակրի պահանջներին: Նայեցէք ճակատի նեղութեան և դիմանկիւնի աննշանութեան, որոնք սահմանափակ մըտաւոր գործունէութեան յայտարարներ են: Ուշադրութիւն դարձրէք թևերի ու ոտքերի երկարութեան ու ամրութեան, և վերջապէս յետևի սարսափելի ուռոյցքներին:

«Այդ բոլորը, ճիշտ է, սկզբնական ձևի մէջ և մեր մարմնակազմումն էլ կայ. այդպէս, օրինակի համար, մենք գտնում ենք մեզանում ատամներ ընդհանրապէս, վճիտ ու փայլուն. տեսնում ենք թեթև կորնթարդութիւն մեր յետևը, և նկատում ենք փոքր սկզբնական վիճակի մէջ: Բայց, ընդհանրապէս, մեր ամբողջ մարմնակազմը ունի այնպիսի զարգացած գեղեցկութիւն, որ նա խիստ բարձր է երկրային մարդու արտաքին պատկերից, թէև մեր մարմնի ձևերն էլ լիովին կատարելութեամբ փայլելուց դեռ շատ հեռի են:»

Յետոյ, իր ասածների գումարն անելով, պրօֆեսօրը հետևեալ խօսքերով աւարտեց դասախօսութիւնը.

«Այդօրինակ էակը, եթէ նա այստեղ մեր աչքերի առաջ չը լինէր, կարելի կը լինէր բնութեան մի վիժածը համարել: Փխրուն մարմնի այդ կոյտը,—որ իր կեղտոտ արտաթորումները դուրս է տալիս մարմնի բոլոր բացուածքների մի-

ջով, անդադրում թքում է բերանից, մշտական խնջում է քթից, շարունակ արտաթորում է ականջների մէջ գարշութիւն,—այդ մարմինը պարունակում է իր մէջ, որովայն կոչուող ներսուած ընդունարանում, թափառուն կեղտի մի ամբողջ կոյտ: Բայց և այնպէս, այդ ինքնօրինակ ոչ գեղագիտական մարմնակազմը երկրի ուսումնականներից ու փիլիսոփաներից յայտարարուած է արարչազօրծութեան թագն ու պսակը կազմող էակը»:

Վերջացնելով իր դասախօսութիւնը, պրօֆեսօրը հրաւիրեց ունկնդիրներին հետևեալ օրը շնորհ բերել «Սովորութիւնների և Զգեստների» գահլիճը, խօսելու համար «Չորսձեռանիների ու երկրային երկոտանիների բարոյականութեան նմանութիւնը» թեմայի վրայ:

—Այժմ, — ասաց կապիտանը, — ես միայն ցանկանում եմ իմանալ այն բարոյական նմանութիւնը, որ այստեղ, Լուսնի վրայ գտել են մեր և կապիկների միջև:

—Վաղը կը գոհացնեն ձեր հետաքրքրութիւնը,—յարեց մեր բարեկամ լուսնաբնակիչը, իսկ այժմ, եթէ ցանկանում էք, կարող էք օգտուել թևերով, ձեզ համար նշանակուած բնակարանը երթալու:

—Թևերով:

—Այո: Նրանք պատրաստուած են հասարա-



կաց արհեստանոցում մասնաւորապէս ձեզ համար, որովհետև մեր թիւերը բաւականաչափ ամուր չեն կարող լինել՝ վերցնելու համար ձեր ծանրութիւնը և ձեր ամբողջ ճարպը, որ ձեզ դարձնում է այնքան անձոռնի ու անշնորհալի:

## XII. ԹՌՁՈՒՄ ԵՆՔ

Կապիտանը, որ սովոր էր Կոստանցի թատրոնի օթեակներում իրան Պարիս կամ Գանիմէզա<sup>1</sup> ձևացնելու, դասախօսութեան ժամանակ զգում էր մի անողորմ նախատինք, բայց շուտով միութարուեց, մտածելով, որ Հռոմի կանանց ճաշակն ուրիշ է, քան լուսնային բնակչուհիներինը: Այդ պատճառով նա վճռեց սղամարդութեան օրինակ ցոյց տալ:

— Թեւեր. լաւ, թող լինեն թիւեր: Տուէք այստեղ թիւերը:

Բերուեցին մի քանի թիւեր, որ մի ճարպիկ մեքենագործ հրաշալի կերպով ամրացրեց մեր ուսերին:

— Ինչո՞ւ, սակայն, — ասացի ես ծերուկին, — զրկել երկիրը մի այսպիսի թանկագին հնարումից: Ինչո՞ւ համար երկրի բնակիչներին հնարաւորութիւն չը տալ ձեր գիւտերի պատւիրներով օգտուելու:

<sup>1</sup>) Դիցարանական գեղանի երիտասարդներ:

— Բայց ես ձեզ արդէն ասել եմ. դա մեր զաղտնիքն է և դուք իր ժամանակին կիմանաք:

— Որ այդպէս է, միայն մի բան, որ ինձ ծայրայեղօրէն զարմացնում է, դուք կարող էիք ինձ բացատրել: Այդ ինչպէս է, որ դուք կարողանում էք մեր լեզուով խօսել:

— Լուսնի վրայ ամենքն էլ գիտեն Երկրի զանազան լեզուները:

— Բայց այդ ի՞նչ կերպով:

— Շնորհիւ չափից դուրս ուժեղ հեռադիտակների, որոնք դիւրացնում են մեզ կարգալուծներ մագաղիսների ցուցանակները, ձեր փողոցներին անունները կրող մակագրութիւնները, և առաւելապէս, շնորհիւ ձայնագրական խտացուցիչների, որոնք թոյլ են տալիս մեզ՝ երբ և որտեղ ցանկանանք՝ լսել ձեր ձայնի հնչիւնները և ձեր խօսած բառերը:

— Ես արմանքից ու ապշանքից չը գիտէի ինչ անել:

— Ուրեմն դուք գիտէք այն լեզուները, որոնցով խօսում են բոլոր մոլորակների վրայ:

— Ո՛չ բոլորը, այլ մի քանիսը. ամենից աւելի լաւ գիտենք Երկրի լեզուները, որովհետև նա միւս մոլորակներից աւելի մօտ է մեզ:

— Իսկ դուք ձեր մէջ մեր լեզուների թուին չը պատկանող լեզուով էք խօսում:

— Ի հարկէ. մենք խօսում ենք շատ աւելի

պարզ լեզուով, որ միևնոյն ժամանակ հեշտանում է շնորհիւ ուրիշ անձի մտքերն ըմբռնելու մեր կարողութեան: Եւ այդ իմ ասածներն մէջ վճռականապէս ոչ մի դատարկաբանութիւն չը կայ: Կեանքի արտայայտութիւնները երերումներ են, իսկ մենք ընդունակութիւն ունենք զգալու այնպիսի երերումներ, որոնք դեռ չեն կարող ձեզ ըմբռնելի լինել, ձեր զարգացման այդ աստիճանի վրայ: Մտքին ընկերանում են յայտնի երերումներ, որոնց ըմբռնում է այնպիսի զարգացած օրգանիզմը, որպիսին մերն է:

Մենք, հաստատուն կերպով ամրացրած մեր թիւերով, դուրս եկանք բաց տեղ:

—Եթէ ցանկանում էք,—ասաց մեր սիրալիր ուղեցոյցը,—մենք կարող ենք ուղղուել դէպի երկրային հեռագիտակը: Այնտեղ դուք կարող էք որ և է բան իմանալ ձեր համասեռների մասին:

Այդ առաջարկութիւնը հոգեգմայլումի աղաղակով ընդունեցինք:

—Այդպէս ուրեմն,—ասաց մեր ուղեցոյցը,—անվախ հետևեցէք ինձ. թռչել դուք կարող էք կատարելապէս բնագոգօրէն:

Այս խօսքերով նա թռաւ. նրան հետևեց մօնսինեօրը, կախուելով օդի մէջ ինչ որ հսկայական շղթիկի ձևով:

## XII. ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԱՐՁԱԿՈՒԱԾ ՀԱՅԵԱՅՔ.

Թռչելով մեծամեծ լուսաւոր տարածութիւններն վրայով, որոնց մէջ ամեն բան շնչում էր զեղեցկութեամբ ու ներդաշնակութեամբ, ես զգացի իմ երկրաքաղաքացիական վիճակի անասելի ոչնչութիւնը: Առաջին անգամ լինելով՝ պարզուեց ինձ այն ահագին հեռաւորութիւնը, որ բաժանում է մարդկանց ամենամեծին՝ լուսնաբնակիչների ամենայետինից:

Այդ տարբերութիւնը շատ աւելի մեծ է, քան այն, որպիսին գոյութիւն ունի մարդու և նրա չորսձեռանի համասեռների միջև:

—Գուցէ,—զիմեցի ես ծերուկին,—դուք գուշակ՞ում էք իմ մտքերը:

—Ո՛չ բոլորովին: Ձեզանում մտքին ընկերացող երերումները ծանրաբեռնուած են ձեր մարմնի մէջ գտնուող ճարպի կոյտով, և այդ պատճառով շատ ու շատ թոյլ են, քան մեզանում: Մեր օրգանիզմի առաջնակարգ ու ամենից աւելի գործունեայ մասը հոգին է, իսկ ձեզանում՝ մարմինը: Մենք կարող ենք մեզ նման էակների մտքերն ըմբռնելու մինչև իսկ այն ժամանակ, երբ նրանք լիովին կազմաւորուած էլ չը լինեն, մինչդեռ ձեր վերաբերութեամբ այդ անկարելի է:

—Այդ բանը ես կուզէի—ասացի ես—հաղորդել Երկրի վրայ նրանց, որոնք ամենայն կու-

տուրայի իբր հիմք դնում են գոյութեան կռիւը: — Գիտեմ, գիտեմ: Ձեզանում դեռ մինչև այժմ, հէնց որ դադարում է նիւթական կարիքը, կորչում է և ամենայն նախանձախնդրութիւն: Երևելի, բայց արհամարհելի «կաշու հարց» արտա-յայտութիւնը մեզանում արդէն ապրել վերջացրել է իր դարը, և երբ մէկն ու մէկը նրան արտասանէ մեզանում, շատերի ծիծաղը կը յարուցանէ:

— Ուրեմն, դուք տեսնում էք, որ մենք, երկրային հասարակութեան անդամներս, գտնւում ենք լաւ ճանապարհի վրայ:

— Անպայման: Մարդկանց իրար դէմ ուղղած գոյութեան կռիւը վերափոխել բնութեան հետ մարդու պայքարի, նշանակում է՝ քանդել այն հանգոյցը, որ արգելք է հանդիսանում ձեր բնախօսական, հետևապէս և՛ հոգեբանական զարգացման:

— Բայց այլաձև հասարակային կազմի հաստատութիւնը իր հետ անշուշտ չի բերի մարդկային օրգանիզմի փոփոխութիւն:

— Իհարկէ ոչ: Մեր ներկայ բնախօսական վիճակին համեմատ համար, ձեզ հարկաւոր են հազարաւոր դարեր, մօտաւորապէս անքան, որքան անցել է այն ժամանակից, երբ մարդանմանը սկսել է մարդ դառնալ: Մանաւանդ որ, ձեզանում դեռ ևս մնում է ապրուստի հարցը:

Բայց երկրային հարստութիւնները ամբողջ մարդկութեան միաբան ջանքերով օգտակարացնելով, գոյութեան համար միջոցներ ձեռք բերելու աշխատութեանը պատշաճաւոր ուղղութիւնն ու կանոնաւոր կազմակերպութիւնը տալով, դուք տէր կը դառնաք ազատ ժամանակի և կարող կըլինէք ձեր բոլոր ոյժերն ու ժամանակը, որոնք այժմ ձեզ մօտ մարմնի պահպանութեան համար են վատնւում, նուիրել մտաւոր աշխատանքի. իսկ այդ վերջինը ձեզ շուտով կառաջնորդէ զարմանալի մտային զարգացման:

Այդ բոլորից, անսպասելի մի պատահար կանգնեցրեց մեր թռիչքը:

Կապիտանի սուրը խճճուել էր թևի մէջ, և նա բարձր կանչով գլխիվայր էր թռչում: Պենսիլեյրօն արագաբար դուրս հանեց գօտկից քարշարած փոքր պարկի միջից մի փոքրիկ երաժշտական գործիք և նրանով հաւարի ազդանշան տուեց:

Ներբևում, լուսնաբնակիչների ամբոխի մէջ, յանկարծ առաջացաւ մի անսովոր յուզմունք, որը, սակայն, իսկոյն փոխուեց մեզ բոլորովին անհասկանալի ինչ որ հաւասարաչափ շարժումների:

— Նրանք պատրաստում են նախապահանող ցանց, — նկատեց մեր ծերուկը. — նայեցէք:

Իսկապէս հէնց այդ բոլորից կապիտանը իր ամբողջ ծանրութեամբ ընկաւ վայրկենապէս ձը-

գուած ցանցի մէջ, որից յետոյ կրկին թուա-  
օդի մէջ՝ կայծակի արագութեամբ յետ արձա-  
կուելով ցանցից:

—Այդօրինակ դիպուածներ շատ հազուա-  
դէպ են, — յայտնեց Պենսիէրօն, — բայց և այն-  
պէս լինում են և կանխատեսուած են: Պատա-  
հաբար երկու քայլ է մնում մեզ մինչև վիթխա-  
րի հեռագիտակը և մենք հանգիստ կարող ենք  
իջնել գետնի վրայ:

Բլրի գագաթին, — որ ներկայացնում էր գե-  
ղեցիկ, ուրախ մի տեսարան, նրան ծածկող ծաղ-  
կազարդ բոյսերի շնորհիւ, որոնց մէջ բարձրա-  
ձայն երգում էին գունազեղ թռչուններ, ըստ  
երևոյթին ոչ միայն չը վախենալով երբէք լուս-  
նաբնակիչներին, այլ և շատ բարեկամաբար վե-  
րաբերուելով նրանց, — բարձրանում էր մի հըս-  
կայական հեռագիտակ, բացառապէս երկիրը դի-  
տելու համար նշանակուած:

Սոստովանում եմ, չը նայելով Լուսնի վրայ  
իմ առաջ ներկայացող բոլոր անակնկալներին,  
չը նայելով որ այդ ամենը զգալի կերպով պա-  
ղեցրեց իմ յարգանքը դէպի մեր մոլորակը, բայց  
և այնպէս այսքան հեռաւորութիւնից երկիրը  
ողջունելու հնարաւորութեան միակ միտքը խորը  
ցնցեց ինձ:

Թեև երով մի քանի թափահարումներ անելով՝

մենք արդէն գտնուում էինք անագին քիմիական  
լաբօրատօրիայի վրայ, ուր հերթով աշխատում  
են լուսնաբնակիչները խիստ կանոնաւոր ցուցա-  
կազրի համաձայն, միևնոյն ժամանակ օրուայ  
մէջ կէս ժամից ոչ աւելի: Այդտեղ պատրաստ-  
ւում էին սննդառութեան էկստրակտներ Լուս-  
նի բնակչութեան համար:

Մեր առաջնորդը բացատրեց մեզ, որ Լուս-  
նի վրայ զանազան մեքենական ու քիմիական  
արդիւնագործութիւնների մէջ, շնորհիւ մեքե-  
նաների լայնածաւալ կիրառութեան,՝ ձեռքի ա-  
մենայն աշխատանք համարեա զրօյի է հասնում:  
Առհասարակ անհրաժեշտ առարկաների արտա-  
դրութիւնը որոշ պահանջներ է դնում բնակ-  
չութեան առաջ, նրա կորովամտութիւնն ու մտա-  
ւորականութիւնը երևան հանելու համար, բայց  
շատ քիչ ժամանակ է կլանում. իսկ լուսնաբնա-  
կիչների ճիգն ու եռանդը ուղղուած են՝ գլխաւո-  
րապէս՝ նորանոր հնարումների ու կատարելա-  
գործութիւնների:

Մեր ֆինանսիստին ամենից աւելի ապշե-  
ցնում էր այստեղ վանդակապատների, երկաթեայ  
նիզերի ու կողպէքների կատարեալ բացակայու-  
թիւնը, ոչ միայն հասարակային հիմնարկութիւն-  
ներում, այլ և մասնաւոր տներում: Այդ առթիւ  
արած նրա դիտողութեան՝ ծերունի լուսնաբնա-  
կիչն ասաց.

—Վանդակապատներ. ի՞նչ բանի համար են նրանք: Այստեղ զողեր չը կան:

—Գողեր չը կան:

—Եւ ինչպէս լինեն, քանի որ ամեն ինչ պատկանում է բոլորին:

—Բայց վատ բնագոյումները, իմ թանկագին... բնագոյումները, — պնդում էր անհանդարտ ֆինանսիստը յայտնապէս ցանկալով թունդ վէճի բռնուել գետնի մակերևոյթից վեր յիսուն մեթր հեռաւորութեան վրայ:

—Գողութեան մասին ո՞չ մի խօսք չէ կարող լինել այնտեղ, որտեղ ո՞չ ոք ո՞չ մի բանի կարօտութիւն չունի: Գալով շար կամքի թէօրիային, — շարութիւնը շարութեան համար, — ո՞չ մի իմաստ չունի, բացառութեամբ որ և է արտակարգ, զուտ ախտաբանական դէպքերի. իսկ այդ դէպքերումն էլ վանդակապատներին դիմել մեղանում ընդունուած չէ, այլ բժշկին:

— Բայց և այնպէս, — շարունակեց պնդել յամառաբար բարեմիտ ֆինանսիստը, — ազահու-թիւնը, շահի և յափշտակութեան ձգտումը...

— Այդ բոլորը կատարելապէս անյայտ զգացմունքներ են Լուսնի վրայ. նրանք այդպէս կը լինեն և Երկրի վրայ, բայց միայն այն ժամանակ, երբ ընդհանուր ոյժերով և խելացիօրէն դուրս հանելով Երկրից նրա բոլոր հարստութիւնները, կը յաջողուի ձեզ այնքան մեծացնել նրա

արտադրողականութիւնը, որ ձեր բոլոր պահանջները բաւականութիւն գտնեն:

Յետոյ, երբ արդէն բարեկեցութիւնն ընդհանուր է, ո՞չ ոք այլ ևս չի գողանայ, որովհետեւ Երկրային բնակիչն էլ, չը նայելով որ էակների ստորին ցեղին է պատկանում, բնաւ չէ մտածում վերցնել այն, ինչ որ միշտ գտնուում է իր տրամադրութեան տակ. մարդիկ ո՞չ չեն հաւաքում օդը, որովհետեւ շատ լաւ գիտեն, թէ միշտ իրանց մօտ բաւականաչափ կը լինի նրանից. ճիշտ հէնց այդ կերպով նրանք չեն սկսի դիզել ո՞չ հաց, ո՞չ միս, երբ ուտեստի այդ արդիւնքները կը լինին չափից աւելի առատ և ամեն մէկի տրամադրութեան տակ: Այն ժամանակ փող էլ չեն գողանայ, երբ արդէն իրանց բոլոր պահանջները գոհացում կը գտնեն:

— Ուրեմն, բոլոր մարդիկ ջէնտլմէններ կը դառնան:

— Անպատճառ. կեանքի նոր պայմանները Երկրի վրայ, բարոյախօսների թէօրիաներից ու խրատներից աւելի շուտ և աւելի լաւ, իրականապէս կը փոխեն ձեր սովորութիւններն ու բարոյականութիւնը, որոնք մինչև այժմ գտնուում են կէս նախնական վիճակում:

Մենք թռանք հեռադիտակի բլուրը շրջապատող մի լայնարձակ մարդագետնի վրայով:

—Այս ասպարէզը մարմնամարզական խաղերի և սպորտի համար է,—ասաց Պենսիէրօն:—Մեզանում այդպիսի տեղեր խիստ շատ կան, իւրաքանչիւր գաւառի մէջ, որովհետև խելացիօրէն առաջ տարւող մարմնամարզութիւնը պատասխանում է բնախօսական պահանջին այն աստիճանով, ինչով որ ուղեղային մարզանքը պատասխանում է հոգեկան պահանջին:

—Ուրեմն,—նկատեց ֆինանսիստը, մեծ սիրահար աշխատանքի... բայց ուրիշի, իսկ անձամբ աշխատութիւնից խիստ վախեցող,—գրանից հետևում է, որ դուք աշխատում էք մեր բանուորների նման, քանի որ ձեզ յոգնեցնում էք մարմնամարզութեամբ:

—Դա բոլորովին ուրիշ բան է: Գործարանային աշխատանքը ծանր է, և իր մեքենայականութեամբ ու միակերպութեամբ բթացնող ներգործութիւն ունի. աւելի շուտ նա թուլացնում է մարմինը, քան ամրապնդում, որովհետև լարում ու զարգացնում է միայն առանձին օրգանները, մինչդեռ խելացի կերպով տարուած մարմնամարզութիւնը հաւասարաչափ ամրացնում է բովանդակ օրգանիզմը իր ամբողջութեամբ:

—Իսկ ի՞նչ էք անում բոլոր օրը.—հարցրեց կապիտանը:

—Ի՞նչ ենք անում: Մենք սովորում ենք, ստեղծում, խաղում ու ճանապարհորդում ենք:

Մեր ամբողջ գոյութիւնը ներկայացնում է ինքնին մի կրթական ուղևորութիւն իդէալական ու իրական աշխարհներում: Թէ ինչ բան է ճանապարհորդութիւնը և ի՞նչ ահազին նշանակութիւն ունի, այդ դուք, խեղճ հաստատաբնակ մարդիկդ, հասկանալ չէք կարող: Ձեզանից տասնից ինը երբէք ովկիանոսով չէ նաւորդել, տասնից ութը իր երկրի սահմաններից չէ դուրս եկել, տասնից վեցը իր քաղաքի պատերը չէ թողել: Ձեր եղբայրների մեծ մասը անց է կացնում կեանքի այնպիսի եղանակ, որ ոչնչով չէ զանազանւում իրանց ծակերից շատ հեռու չը գնացող խլուրդների կեանքից:

Մեր առաջ ներկայացաւ ահազին չափերի հասնող մի շինութիւն, Երկրի ամենահռչակաւոր շէնքերից բարձր: Զանազան յարկերի երկայնքին ձգւում էին լայն գալերիաներ, ամբողջովին ծաղկազարդ բոյսերով պճնուած: Այդ պատշգամբերում կանգնած էին լուսնաբնակիչները, հրճուելով երեկոյեան աստղի ցոլումով, մինչդեռ անտեսանելի օրկեստրներ լռիկ անգործութեան մէջ նուագում էին զմայլելի ու միևնոյն ժամանակ իրանց պարզութեամբ վսեմ մեղեդիներ:

Կապիտանը ուսերը սեղմեց.

—Այդ ի՞նչ տեսակ երաժշտութիւն է: Ըստ իս, հրացանածիգ գնդի օրկեստրի նուագած ար-

քայական քայլերդը դրանից շատ աւելի լաւն է:

— Այդ ձեր յայտարարութիւնը— նկատեցի ես— ոչ ոքի չի դարձացնի. նա համապատասխան գծի վրայ է ձեր արհեստի հետ:

Յետոյ, մինչ մեր ուղեցոյցը թռչում էր աշտարակի շուրջը, պլատֆորմներից մէկի վրայ մեզ համար յարմարաւոր տեղեր փնտռելով, գերապայծառը ասաց.

— Ի՞նչ բազմութիւն է խոնուած այն կողմը:

— Իսկ այստեղ կանգնելով, — ասաց Պենսիէրօն, առաջնորդելով մեզ թափուր պատշգամներից մէկը, — դուք կը տեսնէք մի քանի քիւօմեթր հեռաւորութեան վրայ շրջակայքում լոյսի մի լայնածաւալ շրջան, իմ հայրենիքը, որտեղ դուք միշտ կարող էք սքանչանալ հրաշագեղ գիշերուայ տեսարանով:

— Ի՞նչ կերպով:

— Այդ շրջանի սահմաններում միշտ լուսաւորում է միջօրէի—ի հարկէ ելեկտրական— արեգակը: Լուսնի վրայ, ամենուրեք, բացի ութ վայրերից, որոնցից իւրաքանչիւրն ունի գիշերային հեռադիտակ, միշտ կարելի է ցերեկով աստղաբաշխական գննութիւններ անել. ահա ինչու համար և մենք այնքան քիչ ենք քնում: Այդ պատճառով էլ աստղագարդ երկնքի սիրահարները շատ սիրով են յաճախում հեռադիտակներով զինուած վայրերը:

#### XIV. ԼՈՒԿՐԵՏԻՈՍԵԱՆ ԳԻՇԵՐ

Արևը թեքուում էր դէպի հորիզոնը, և ահա մութ կապոյտ երկնակամարի վրայ դուրս լողաց Երկիրը ինչպէս մի ոսկեայ սկաւառակ:

— Ինքնածին ոսկի,— բացականչեց հիացմունքից իրան կորցրած Ֆինանսիստը:

Քանի առաջ էին խաղում գիշերուայ ստուերները, մեր աչքերի առաջ երևան էին գալիս՝ երկնային տարածութեան անհուն խորութեան մէջ պսպղացող հազարաւոր, միլիոնաւոր աստղեր:

Օդի մէջ կատարեալ հանդարտութիւն էր թագաւորում, և միայն լուսնային կօնցերաի հընչիւնները մեզմ հասնում էին մեզ, յիշեցնելով հին հելլենական գիթառների հնչիւնները:

Անսահման խաղաղութիւնը պատեց Լուսնի հարթավայրերը: Այդ անդորրութիւնը չէր խանգարուում ոչ հարբածների աղաղակներից, ոչ թրմբուկների ճայթիւնից, ոչ թնդանօթների որոտից, և մեր միտքը, ընդգրկելով աստղային անեզր տարածութիւնը, պլպլացող աստղերը և անսահման միգամածները, առաջին անգամ զգաց ամբողջ ուրախութիւնը գոյացութեան, որ երևան է գալիս կենդանի հիւլէի տիեզերքի հետ մշտնջենական միացման մէջ և վերանորոգում հազարաւոր ձևերի տակ, անվերջօրէն փոփոխուելով անվախճան նիւթի մէջ:

Րատալանգան բացարեց իր թանկագին Լուկրեաիօսը, որից երբէք չէր բաժանուում, և Երկրից արձակուած լոյսով սկսեց լսելի ձայնով կարգալ.

«Եւ այդպէս, ոչինչը միայն ոչինչ կարող է տալ, և ամեն ինչ յանգում է նախասկիզբնիւթին: Անսահման է համայն տիեզերքը: Եւ իմանալու կարիք չը կայ, թէ ինչ տեղ ես բռնում դու անծայր տարածութեան մէջ: Ինչպէս էլ որ լինի այդ տեղը, ամենուրեք և միշտ քո չորս կողմը կը լինի անվախճանութիւն»:

Մօնսինեօրը անհանգիստ կերով կուչ եկաւ պատշգամի վրայ: Երևում էր, որ այդ ընթերցումը նրա ներսը տակն ու վրայ էր անում: Բայց անողորբելի Րատալանգան շարունակեց.

«Անդադրում է շարժումը, և գոյութիւն ունեցող ամեն բան միշտ և ամեն տեղ իր գոյութեամբ միայն և միմիայն պարտական է այդ շարժման: Եւ եթէ մէկն ու մէկը հաւատացնել սկսէր, որ իբր թէ աստուածները ամեն բան ստեղծել են միայն մարդուն ծառայելու համար, ես խորապէս հաւատում եմ ու համոզուած, որ այդպիսի մարդու խելքը սեւամպերով է պատած»:

—Մ,—բացականչեց մօնսինեօր Սօտոգօլանս,  
—սպասեցէք...: Թէ նիւթը կարող է մշտնջենական լինել և ի յաւիտենից գոյութիւն ունենալ, ես այդ կարող եմ թոյլ տալ...: Բայց թէ նրանից կազմաւորուեցին այն զարմանալի երևոյթ-

ները, որ մենք տեսնում ենք, և կենդանի էակները, և բանական մարդը:

Սակայն, Րատալանգան անշփոթ շարունակեց իր ընթերցումը, և մինչ Երկիրը հորիզոնից աւելի և աւելի վերև էր բարձրանում, Լուսնի վրայ արտասանուեցին այն տողերը, որոնց մէջ երկու հազար տարի առաջ կերպաւորուած էր նիւթի բոլորակաշրջութեան ուսմունքը:

«Մենք յաճախ տեսնում ենք, թէ ինչպէս աղբը իրանից արտադրում է ամենատեսակ որդեր ու ճիճուներ, երբ անդադրում անձրևներից խոնաւացած գետինը փտութիւն ու նեխում է առաջ բերում իր մէջ: Ճիշտ այդ եղանակով էլ փոփոխում են մնացեալ բոլոր բաները: Ջրահիւթը, տերևները, խոտերը փոխակերպւում են կենդանիների մարմնի, սրանք էլ մարդկանց մարմնի. մենք ինքներս էլ շատ անգամ իբր կերակուր ենք ծառայում ոչ միայն գազաններին, այլ և գիշատիչ թռչուններին: Այդ պատճառով ամեն մի կեր մի միջոց է, որով բնութիւնը արտադրում է բոլոր մարմինները, շնորհելով նրանց կեանք ու զգացմունք: Ճիշտ այդ ճանապարհով էլ նա յաճախ սաստիկ կրակ է առաջացնում չորացած ծառի մէջ, նրան ամբողջովին բոցերի վերածելով»...

«Միայն մի բան է ճշմարիտ. նիւթը պինդ գանգուածի մէջ ամրապէս չէ զօդուած, որով-



հետև մենք տեսնում ենք, որ իւրաքանչիւր առարկայ ենթակայ է փոքրացման, և որ ժամանակի ընթացքում այդ նոյն առարկան քիչ քիչ նուազում է և վերջապէս մաշուելուց ամբողջովին անհետանում է տեսութիւնից: Բայց միևնոյն ժամանակ, ամեն բանի գումարը, ինչպէս յայտնի է, մնում է միշտ նոյնը. որովհետև մարմիններից ոմանք նուազում են մասնիկների հեռանալու հետ, միւսներն էլ միևնոյն մասնիկների գալուստով միատեսակ չափով աճում են ստանում: Ի՞նչ որ մէկին կեանք է տալիս, ոչնչացնում է միւսին. ինչ որ մէկին քայքայում է, միւսին կեանք է պարգևում: Ահա այդպէս ամեն բան նորոգւում է յաւիտեան, և ինչ որ աշխարհում մահուան է ենթակայ, նա փոխանակութեամբ ապրում է մըշտանջանապէս: Ազգերից ոմանք փթթում են, միւսները ոչնչանում, և աննշան ժամանակամիջոցի մէջ փոփոխւում են բոլոր սերունդները, կեանքի ջահերը միմեանց յանձնելով»...

«Ճիշտ է, անձրևները կորչում են, երբ կենսատու թարմ ոյժով նրանց ծնող եթերը ուղարկում է երկրի մայրական ծոցը. բայց այդ կորստի փոխարէն բուսնում են շքեղ հասկեր. ծառերի ճիւղերը կանաչում են տերևներով, և նրանց վրայ հիւթալի պտուղներ են հասունանում: Այդ պտուղը անուցանում է թէ՛ մեզ, թէ՛ զազանին և թէ՛ թռչուններին: Բոլոր քաղաքներն ու շէնքերը

այն ժամանակ ծաղկում են մանուկների առատութեամբ: Տերևախիտ անտառներում թռչունների երգեցողութիւնն է հնչում: Ճարպոտած տաւարը պարարտ արօտամարգերի մէջ պառկում, հանգստանում է, առատօրէն հոսում է ուռած ու փքուած ստինքներից շողշողուն կաթնային հեղանիւթը, որը՝ վայելելով՝ մատաղ սերունդը հարբած, կանչ ու խինդով բերկրում ու խայտում է ցնծութեամբ քնքոյշ խոտերի վրայ: Ուրեմն, այն բոլորը, ինչ որ մենք տեսնում ենք, չէ կարող ոչնչանալ, այլ միայն բնութեան ձեռքով նոր ձևի է վերածւում: Այն ամենը, ինչ որ ծնւում է, մի ուրիշ առարկայի մահուան պտուղն է»...

«Մենք ամենքս ծագում ենք երկնքի ընդհանուր սերմից. մեզ բոլորիս ընդհանուր է այն հայրը, որից մայր-երկիրը՝ ստանալով պայծառ հեղանիւթը՝ բեղմնաւորւում է և շուտով ծնում ծառերի սողարթախիտ ձոխանտառներ, արտերում ոսկեղէն հասկեր, և՛ մարդկային ցեղը, և՛ կենդանիների բոլոր տեսակները: Նա նրանց անխտիր ուտելիք է տալիս, որով ամենքն էլ ապրում են, ուրախ գուարթ կեանք վարելով ու սերունդներ բազմացնելով: Ահա թէ ինչո՞ւ համար այնքան իրաւացիօրէն մայր անունն են շնորհել երկրին:

«Հաւասարապէս այն ամենը, ինչ որ աւելի վաղ է դուրս եկել երկրի ընդերքներից, նորից երկրին է վերադառնում. իսկ այն, ինչ որ երկն-

քից է յայտնուել, այնտեղ համբառնալով մտնում է կրկին եթերային բնակարանները: Մարմինը աւերիչ մահով այնպէս չէ քայքայուում, որպէս զի դրանով ինքը՝ նիւթը յաւիտեանս ոչնչանար, այլ միայն նրա բաղադրութիւններն են լուծուում, այն նպատակով միայն, որպէս զի ուրիշ ձևի տակ մտնելով, նա ստեղծէ նորանոր իրեր: Ահա թէ ինչն է բոլոր մարմինները փոխում են թէ իրանց կերպարանքը և թէ գոյնը. զգացումներ են ձեռք բերում և յանկարծ նրանցից կրկին զրկւում»:

Իր ընթերցումը Բատալանզան աւարտեց մի հատուածով, որի մէջ Լուկրեցիոսը գովաբանում է Եպիկուրոսի հանճարը:

«Այն իսկ ժամանակներում, երբ բովանդակ մարդկութիւնը, ողորմելի անգորութեամբ տառապելով, ծռել էր պարանոցը կրօնի ծանր լծի տակ, որ երկնքի բարձրութիւններից ճնշում էր նրան ու վախեցնում, Ելլադայից մահկանացու մի տղամարդ յանդգնեց առաջինը նայել ուղիղ հրէշի աչքերին և նրա հետ միայնակ մենամարտի բռնուել: Նրան չը սարսափեցրին ոչ աստուածների տաճարները, ոչ երկնային որոտների ու կայծակների սպառնալիքները, այլ աւելի քաջարի ոգով սկսեց նա եռանդով ձգտել այն բանին, որ հզօր ձեռքով խորտակէ ամրակուռ դռները, որոնց յետև ծածկուած էր բնութիւնը: Շառաչմամբ վայր ընկան այդ դռները նրա առաջ, և

նա իր յաղթական մտքով համարձակ ներս սլացաւ սահմանազօրից այն կողմ, դէպի եթերային թագաւորութիւնը: Հոգեկան հայեացքով դիտեց իմաստունը տիեզերքի անհուն տարածութիւնը, և այնտեղից դուրս բերեց գոյացութեան նուրբական գաղտնիքները:

«Նա, այդ պանծալի յաղթողը, մեզ սովորեցրեց՝ թէ ինչ բան կարող է, և ինչ բան չէ կարող պատահել աշխարհում՝ բնութեան յաւիտենական օրէնքների համաձայն, և ինչ սահմանների մէջ ամեն բան անփոփոխ է մնում: Ահա այդ ժամանակից, յաղթական մահաբեր ոտքերով կոխկոտւում է հաւատը, իսկ մենք հաւասարուում ենք երկնքի հետ»:

—

Թափահարելով մեր թևերը, մենք մտանք դահլիճ— դիտարանը, որ գտնւում էր հեռադիտակի ստորին ծայրի մօտ: Փոքր ինչ պակաս չափերի խոշորացոյցի ապակիներ ուղղուած էին ճիշտ այն ձևով, ինչպէս դրուած էր մեծ բեկբեկիչը, և թոյլ էին տալիս որոշել Երկրի վրայ զանազան մասնաւորութիւններ:

Ոչ առանց ներքին թրթռումի մենք մօտեցանք խոշոր ակնապակիներին: Գրո՞ղը տանէ,— վերջի վերջոյ կարելիութիւն ունենալ այսքան հեռաւորութիւնից նայել մեր մայր հողին:

Մեր աչքերին ներկայացած տեսարանը փա-

ուհեղ էր: Մենք տեսանք Երկիրը, իր ծաւալով  
49 անգամ Լուսնից աւելի մեծ:

Մի չափազանց սիրալիր լուսնաբնակիչ, շար-  
ժուն հեռագրիտակի մի եզրին նստած, գոհացում  
էր տալիս մեր ամենափոքր ցանկութիւններին,  
ուղղելով և հիանալի թեթևութեամբ դարձնելով  
ահագին գործիքը:

— Մնորեմ, ամենապատուական պարոն Լուս-  
նաբնակիչ,— գոչեց Ֆինանսիստ Վենտրեսկան,—  
ինձ մի մեծ շնորհ արէք, ուղղեցէք խողովակը  
Տիվօլի վրայ: Ես կուղէի տեսնել՝ արդեօք իմ  
բամբակեղէնի գործարաններում աշխատում են,  
թէ պարապ սարապ նստած՝ կաշիս են քերթում:

Այս խօսքերով Ֆինանսիստը արդէն աչքերը  
կոխեց խողովակի մէջ: Անցաւ մի քանի ակըն-  
թարթ, և մենք նկատեցինք, որ մեր Ֆինանսիստը  
այնչափ էր շանթահարուած, որ կորցրեց խօսե-  
լու ընդունակութիւնը: Վերջապէս, նա բացա-  
կանչեց.

— Այս նզովից արմատներ: Իմ բանուորները  
ժողովի են հաւաքուել հրապարակի վրայ: Ես  
տեսնում եմ ինչպէս նրանք գրգուռում են: Ո՛վ  
է այդ կեղտոտ թափթփածը, որ ձառախօսում է:  
Ա՛, դա մեքենագէտ Լիբերինին է: Կարող եմ ե-  
րևակայել, թէ ինչ յիմարութիւններ է գուրս  
տալիս իմ մասին: Սպասիր, աղաւնեակս, թող  
մէկ իջնեմ Երկիր, ես նրան անյապաղ գուրս կը

վունդեմ: Օ՛, եթէ ես կարողանայի իմանալ, թէ  
ինչ է խօսում նա...

— Այդ շատ հեշտ է,— առանց Պենսիլթրօն, և  
մի քանի հրահանգներ տալով մի լուսնաբնակիչի,  
հրամայեց բանալ մի ուրիշ գործիք, ֆօնագրաֆ  
— հաւաքիչը, որ իսկոյն սկսեց գործել:

Մենք լսեցինք խուպոտ, բայց որոշ մի ձայն:

— Այդպէս, եղբայրներ, մեր ազատութեան  
ժամը հնչեց: Կապիտալի շահագործող ձգտում-  
ներին մենք կը հակադրենք բանուորների փոխա-  
դարձ օգնութիւնը, և ցոյց կը տանք կապիտա-  
լին, թէ նա չէ կարող առանց աշխատանքի եօլա  
գնալ, և թէ աշխատանքը խաղաղ և օրինական  
միջոցներով կարող է իր արդարացի պահանջ-  
ները պաշտպանել:

Բուն ծափահարութիւններ հետևեցին այդ  
խօսքերին այն պահուն, երբ երկու նախազգոյշ  
լուսնաբնակիչներ մեր ուշաթափուած Ֆինան-  
սիստին դուրս տարան թարմ օդի մէջ:

— Ահա այդպէս, Երկրի վրայ էլ սկսեցին  
վերջապէս արթնանալ, — ասաց լուսնաբնակ աստ-  
ղաբաշխներից մէկը:

Այդ միջադէպը երկար չը խանգարեց մեր  
գննութիւնները: Հեռագրիտակը Հոմմի վրայ ուղ-  
ղուեց: Ի՞նչ մանր ու չնչին ներկայացաւ մեր աչ-

քերին «յաւիտենական քաղաքը», դեղձանիկի վանդակի նմանող իր Ս. Պետրոսի մայր եկեղեցիով, և արտոյտի վանդակի նման ցած ու տափակ Կվիրինալով:

Սան-Կարը Կատինարիայի հրապարակով անցնում էր մոխրագոյն վերարկուներ հագած վանականների մի թափոր, տխուր ու մռայլ մի տեսարան ներկայացնելով մեզ համար, որ այժմ լցուած էինք լոյսի այնպիսի առատութեամբ:

—Օյ, օյ,— բացականչեց կապիտանը,— դա՛ն ինչ բան է:

Երբ ակնապակին ուղղուեց Իտալիայի ու Ֆրանսիայի սահմանի վրայ, առարկայական ապակու վրայ դժագրուեցին այդ երկու ազգի սուսերամարտիկների կերպարանքները. նրանք հէնց այդ ըոպէին, սրերը ձեռքերին, առաջնութեան դափնին էին ուղում խլել միմեանցից՝ մերձաւորին սպանելու արուեստում:

Հարկ եղաւ մեզ արագութեամբ շուռ տալ հեռադիտակը, ուղղելով նրան հարաւից հիւսիս, արևմտքից արևելք, ահագին թռիչքներ անելով Երկրի մակերևոյթի վրայ: Մեր աչքերի առաջով անցնում էին մեր մոլորակի ամբողջ գեղեցկութիւններն ու մեծ վայելչութիւնը:

Ծայրագոյն Արևելքում մենք տեսանք բարձրը—կուլտուրական եւրոպացիներ, որոնք կոտորում էին Չինացիներին, թէ ինչո՞ւ նրանք չը

կամեցան, որ իրանց երկիրը մտցնուի թունաւորող աֆիօնը: Իրլանդիայում ազնուականների հեծելախումբը որսով էր զբաղուած տեղացի բնակիչների երեսի վրայ թողած արտերում: Սպանիայում՝ մուրացող վանականների մի ամբողջ բանակ հաւաքում էր՝ վանքերի դրամարկղների համար՝ դժբաղդ ժողովրդի վերջին կոպէկները: Գերմանիայում՝ կաթոլիկ կուսակցութեան հետտորները ճիգ էին թափում նորանոր պատնէշներ կանգնեցնելու ազգերի միջև, որպէս զի վերջիններս չը կարողանան եղբայրաբար միմեանց հետ փոխանակել աշխատանքի արդիւնքները: Իտալիայում, բոլոր քաղաքների մէջ զօրախաղեր էին լինում, և ամեն տեղ զօրանոցներ էին բարձրացնում. իսկ այնտեղ, ուր խուժանն է պատսպարուում, մեր աչքերի առաջ կարիքի ու խայտառակութեան այնպիսի պատկերներ էին ներկայանում, որ մենք շտապեցինք շուտով մի կողմ քաշուել հեռադիտակից:

— Բաւական է, բաւական: Մեզ աւելի մի ստորացնէք, մեր բարեկամ լուսնաբնակիչներ:

Եւ այդ խօսքերով մենք շարժեցինք մեր թևերը, թռչելով մեր առաջնորդի հետ միասին դիտարանի ընդարձակ պատուհանի միջով:

## XV. ՍԻՐԱՅԻՆ ԱՐՇԱԽԱՆՔ.

Մեզ ցոյց արուած բնակարանը շինուած էր լիովին եւրոպական ձևով, գտնուում էր հէնց նոյն երկրային հեռադիտակի մօտերքը, այնպէս որ, մենք կարող էինք գիշեր ցերեկ օգտուել նրանից, որպէս թէ Երկրի վրայ լինէինք:

Մեր ուղեցոյցը սիրալիւր կանխատեսութեամբ կարգադրել էր ձեռաց պատրաստել՝ հասարակաց արհեստանոցներում՝ մի հրաշալի կացարան, գերազանցօրէն յարմարեցրած մեր սովորութիւններին ու պահանջներին, և պատուիրել էր նրան տեղաւորել մարգագետնի վրայ, Կապոյտ անտառում, որ իր այդ կոչումն ստացել էր առատ բուսականութեան գոյնից:

Մեր անկողինների մօտ, մետաղեայ տախտակների վրայ մեր լեզուով հետևեալ վերտառութիւններն էին գրուած, և նրանց իւրաքանչիւրի կողքին գետեղուած էր մի ելեկտրական կոճակ.

Լոյս, մթութիւն, օդ, ամութիւն, ցրտութիւն, ջուր, ուտելիք.

— Երբու՞րեւ եմ պատերազմի աստուած Մարսով, — բացականչեց կապիտանը, — մեզ տեղաւորեցին արքայավայել կերպով:

Սօսիներօրը աչք ածեց չորս կողմը, կարծես մի բան որոնելով, և ասաց շփոթուած.

— Ինձ թւում է, որ այստեղ պակասում է մի բան...

— Աղօթքի նստարան:

— Ո՛չ... ճաշի սեղան:

— Ա՛յ, հասկանում եմ, — յայտնեց Փինանսիստը: — Իդէալները գեղեցիկ բաներ են, բայց առանց նրանց կարելի է եօլա գնալ, մինչդեռ ամեն իրական բան... Բայց հուպ տանք «Ուտելիք» բառին համապատասխանող կոճակը: (Այդ ասելով՝ նա սեղմեց կոճակը:) Օ՛, տեսէք, տեսէք:

Հազիւ նա հուպ էր տուել կոճակը, որ սետակի մէջտեղում յատակը բացուեց և ներքեւից բարձրացաւ ընտիր, պարիզեան ճաշակով պատրաստուած մի սեղան բազմատեսակ խորտիկներով:

— Ա՛յ քեզ բան: Բայց այս լուսնաբնակիչները ամեն ինչ գեղեցիկ ու շքեղ են շինում:

— Պարզապէս խղճալի է, — փնթփնթաց մօնսիներօրը, — որ նրանք իրանց հոգիների փրկութեան մասին հոգ չեն տանում:

— Ա՛յ, ս՛յ, — ասաց Բատալանգան, — եթէ նրանք այդ մասին հոգային, այն ժամանակ՝ կարծեմ՝ այս տեսակ ճաշ մեզ չէին տալ. Յամենայն դէպս մեր առաջ այնպիսի բաներ կան, որոնցից երևի չէին հրաժարուի կաթոլիկ եկեղեցու քաղցած ներկայացուցիչները:

Մենք ուրախ զուարթ նստեցինք ճաշի սե-

դանի բոլորտիքը, նախապէս հանելով մեր թևերը և դնելով սենեակի մի անկիւնը:

Թէև մենք կարող չէինք որոշել, թէ ինչ տեսակի կերակուրներ ու խմիչքներ էին սեղանի վրայ, բայց պարզ էր, որ այդտեղ չը կար ոչ միս, ոչ ալքօհօլ. մենք զգում էինք, որ մեր կերածներն ու խմածները չափազանց համեղ ու վերին աստիճանի սնուցիչ էին:

— Աւանդ, — հռուստեց կապիտանը, — այս բոլորի հետ միասին մեր ուրախութիւնը կատարեալ չէ. անխ, թէ կին էլ լինէր այստեղ:

— Թա՛, թա՛, թա՛, — խստութեամբ նկատեց մօնսինեօրը: — Այդ ինչ տեսակ դատողութիւն է: Գոնէ դուք իմ վերարկուից քաշուեցէք:

— Գուք, մօնսինեօր, ուրիշ բան էք, բայց չէ որ ես ողջախոնութեան ուխտ արած չեմ, և խոստովանում եմ ձեզ... յօժարութեամբ կիջնէի այժմ Երկրի վրայ: Այս լուսնային տիկիւնները շատ չոր ու ցամաք բաներ են... Բացի այդ, ես վրստահ էլ չեմ, թէ արդեօք նրանք հասկանում են ինչ բան է սէրը...

— Սակայն, — նկատեց ֆինանսիստը, — երևի նրանք հասկանում են, եթէ այդ մասին կարելի է դատել այս տեղերում խճուղած երեխաների ազին քանակութեամբ:

— Գրողը տանէ, — բացականչեց կապիտանը, — եթէ ես չը վախենայի նրանց կողմից որևէ մի

կոշտ անակնկալից... օրինակի համար, այն ելեկտրական գաւազանի պէս մի բանից... ես արդէն աչքէ կանցնէի այստեղից երկու քայլ հեռու՝ ծաղիկների մէջ թաղուած տնակը: Հաւանական է, որ դա մի որևէ գեղեցիկ լուսնաբնակչուհու կացարանն է...

— Ի բաց վանեցէք ի ձէնջ ամենայն փորձութիւն, — խօսեց խստութեամբ գերապայծառը: — Չորս «Ողջին քեզ, Մարիամ», երկու «Հայր մեր» և մէկ «Փառք ի քարձուս», երբ դուք կը պառկէք քնելու, և ամեն ինչ կանցնի:

Արդէն բաւական ուշ էր, երբ կապիտանը, որի վրայ գերապայծառի խորհուրդները երևի ոչ մի ազդեցութիւն չէին գործել, մահճակալի վրայ երկար շուռ ու մուռ գալուց յետոյ, կամաց հագնուեց և զգուշութեամբ բաց արեց պատուհանի փեղկերը:

Գեղեցիկ լուսնաբնակչուհու ծաղիկների մէջ ընկղմուած տնակը, իբրև մի լուսաւոր փայլփլուն բիծ, դուրս էր ցայտում կապտաւուն անտառի ֆօնի վրայ: Գուցէ աղջիկը դեռ չէր քնել և կարողում էր, կամ նամակ գրում իրանից հեռու գտնուող ու իր գեղեցիկութեան երկրպագու որևէ մէկին:

Վճռական շարժումով բեխերը ոլորելով՝ կապիտանը պատուհանից դուրս ցատքեց մարգագետնի վրայ: Նա դեռ չէր յաջողել թագնուել մի

ծառի ստուերում, երբ չընախատեսուած մի հանգամանք յանկարծ սպառնալ սկսեց նրա բոլոր ծրագիրները քանդելու:

Մեր բնակարանի միւս պատուհանից նոյնպէս դուրս սողաց մի կերպարանք, անտարակոյս եւրոպացու, և զգուշաւոր կերպով չորս կողմը նայելով պատրաստուած էր ուղղուելու հէնց այն կողմը, դէպի ուր ձգտում էր և կապիտանը:

— Գրո՞ղը տանէ, — մըթմըթաց վերջինս, — դա մեր ֆինանսիստն է: Սորհրդաւոր կերպարանքը խոհեմութեամբ դիտում էր իր շուրջը, և կասկածելի ոչինչ չը նկատելով՝ ճանապարհ ընկաւ:

Կապիտանը հետևեց նրան, փնթփնթալով. «Ես նրան կը համսեմ տնակի մօտերքում»:

Մագլցուն ու ոլորուն բոյսերով ծածկուած տնակի բաց դռներից դուրս էր ժայթքում սպիտակ լոյսի մի ամբողջ խուրձ, պայծառ լուսաւորելով մարգագետնի մի մասը:

— Պարոն վէնտրեսկա, — կամաց ձայն տուեց կապիտանը:

Ֆինանսիստը աննկարագրելի սարսափով շուռ եկաւ:

— Մի վախենաք, իմ բազմայրգ բարեկամ, այդ ես եմ, և ինչպէս դուք, ես էլ գնում եմ... աղօթքի:

Ֆինանսիստը կանգնեց շփոթահար:

— Կապիտան, զթացէք...: Եթէ այս բանն ի-

մանան «Իշուկ» թերթի աշխատակիցները:

— Ո՛չ մի բանից մի վախենաք...: Աւելի լաւ է դաշինք կռենք և ընդհանուր ոյժերով ջանանք յարձակմամբ վերցնել ամբողջը:

— Համաձայն եմ, — յայտնեց ֆինանսիստը:

Նրանք սկսեցին զգուշութեամբ առաջ գնալ դէպի տնակը:

— Փնօք Աստծոյ, — ասաց ֆինանսիստը, մօտենալով մարգագետնի վրայի լուսաւոր շերտին, — նա մենակ է:

Մատաղահաս ու սիրունատես մի աղջիկ, հանդարտ նստած սենեակի խորքում, ինչ որ ելեկտրական գործիքի առաջ, նայում էր դէպի նրանց կողմը: Նա մի քիչ կարծես զարմացած էր, բայց տեղից չը շարժուեց:

— Օրիորդ, — սկսեց կապիտանը, իր մօնօկը աչքին սեղմելով և բեխերը հրէշաւոր կերպով ուրբելով, — թոյլատրում էք:

Աղջիկը շնորհալիօրէն կռացրեց գլխիկը և յարեց մաքուր իտալերէնով:

— Մտէք հանգիստ կերպով, յարգելի երկրաբնակիչներ:

Կապիտանն ու ֆինանսիստը՝ միմեանց առաջը կտրելով ներս նետուեցին, բայց նորից ելեկտրական գործիքին դարձած աղջկայ պատշաճաւոր հանդարտութիւնը մի քիչ սառեցրեց նրանց եռանդը:

—Նստէք այստեղ, իմ կողքին, — ասաց նա: — Գուցէ դուք ներկայացման տեսարանով զուարճանալով համար շնորհ բերիք այստեղ: Որ այդպէս է, միասին նայենք:

—Օ՛, այո՛, — ասաց Ֆինանսիստը: — Մենք ՚ի հարկէ, շատ կը ցանկայինք տեսնել:

—Լաւ. ֆոնօկինետելեսկօպը ձեր արամազըութեան տակ է:

Այդ խօսքերով նա հուպ տուեց կոճակը, և յանկարծ տնակի մի պատը բացուեց այն կերպով, որ կարելի էր տեսնել՝ կատարեալ լուսաւորութեան մէջ՝ լուսնային ամենամեծ թատրոններէից մէկի բեմը: Միևնոյն ժամանակ սենեակում լսուեցին մի սքանչելի արեայի հնչիւնները:

—Բայց սա ուղղակի դմայելի է, — բացականչեց կապիտանը:

—Թատրոն՝ ննջարանսում: Ե. դուք ամեն երեկոյ այդ տեսարաններով զուարճանում էք:

—Երբ ցանկանում եմ. երեկոյեան, ցերեկով, ուշ գիշերին, եթէ պատահմամբ վրաս անքնութիւն է գալիս:

—Այ թէ ինչպէս: Բայց յուսով եմ, այդ ներկայացումը երբ և իցէ կը վերջանայ և յաւիտեանս չի երկարի:

—Ո՛չ, նա բնաւ չէ դադարում: Դերակատարները, ճիշտ է, փոխւում են, բայց օպերա-

ները, դրամաները, կօմեդիաները, սիմֆօնիաները զանազան թատրոններում շարունակւում են անընդհատ:

—Զարմանալի բան:

—Շատ աւելի զարմանալի կը լինէր, եթէ մենք պարտաւորուէինք գոհ լինել ճշգորէն սահմանաւորուած գեղարուեստական բաւականութեամբ, նշանակուած ժամին, խիստ կերպով որոշուած ծրագրի համաձայն: Այդպէս են կարգերը այն ժողովուրդների մէջ, որոնք արախտիքական համեստ ոյժերից աւելին չունեն, և ոչ թէ մեզանում: Մենք յաճախ ծիծաղել ենք ձեր երկրի մասին մտածելիս, որ այսինչ քաղաքի բոլոր բնակիչները պարտաւոր են պահանջ զգալ, օրինակ, երաժշտութեան, միայն տարուայ այսինչ եղանակին, որոշ օրերում ու ժամերում, բոլորն էլ միաժամանակ: Համաձայնուեցէք, որ դա չափից դուրս ծիծաղելի է:

Բայց չը նայելով ներկայացման ամբողջ շահեկանութեան, երկու ձեռներէց ընկերակիցները բոլորովին այլ մտքերով էին տարուած:

—Տիրուհի, — ասաց կապիտանը տարփատենչօրէն, — այժմ դադարեցրէք, խնդրում եմ, այդ երաժշտութիւնը, և թոյլ տուէք մեզ վայելել ձեր սեփական, այնքան հմայիչ ձայնի հնչիւնները:

Աղջիկը փակեց գործիքը և մօտեցաւ մի շատ շքեղ զահաւորակի, որ ծաղիկներով լը-



ցուած կողովի էր նմանում, և այնտեղ նստեց.

—Շատ բարի,—ասաց նա—այժմ նստեցէք այստեղ, ինձ մօտ:

Երկու մրցակիցները նստեցին նրա կողքին: Վերջապէս, կապիտանը, որ սովոր էր կանանց հետ վարուել արձակ համարձակ, քաջութեամբ գործի դիմեց:

—Տիրուհի, ես ձեր չքննող հրապոյրներից շանթահարուած եմ:

—Մենք երկուսս էլ շանթահարուած ենք, հաստատեց ֆինանսիստը:

—Ձեր ներկայութեանը մի անսովոր յուզմունք լափում է ինձ...:

—Մեզ լափում է յուզմունքը:

—Ես ձեզ սիրում եմ, օրիորդ:

—Մենք ձեզ սիրում ենք:

Աղջիկը ուրախ ուրախ ծիծաղեց:

—Այդ ի՞նչպէս. միանգամից:

—Այն րոպէից, երբ ես... երբ մենք ձեզ տեսանք:

—Եւ դա իսկ որ հրաշք է: Այդպիսի բաներ մեզանում չեն պատահում:

—Իրաւ եմ ասում, տիրուհի, եթէ այս մտւորակի վրայ թագաւորում է ազատ սիրոյ նման մի բան, որին մենք, Երկրի վրայ, պարտաւոր ենք խստութեամբ ու արհամարհանքով վերաբերուել, ուրեմն ցոյց տուէք, թէկուզ մի րո-

պէով...ազատութեան ոյժը:

—Ազատ սէր... Ի հարկէ.—յարեց աղջիկը, և նրա աչքերը անսովոր փայլով լուսաւորուեցին...:—Ազատօրէն սիրելու բերկրանքը մարդու ամենաբարձր վայելքն է. բայց սրբան հազուադէպ է լինում այդ:

—Հազուադէպ,—բացականչեց կապիտանը:

—Հասկանալի է. չէ որ երկու իմացակա-նութիւնների լիակատար զուգադիպութիւնը յաճախ չէ պատահում:

—Շատ լաւ, տիրուհի, բայց մինչև իսկ եթէ չը լինի էլ մտայնական կատարեալ զուգադիպութիւն, սակայն...

—Օ, հասկանում եմ, հասկանում. բայց, ինչ որ դուք էք ցանկանում՝ զուտ անասնական գործողութիւն է. դա սէր չէ:

—Սէր չէ:

—Օ, ոչ, ի հարկէ ոչ: Միայն ձեր երկրի վրայ է, որ մարդիկ չեն հետամտում երկուէակ-ների բարոյական մերձաւորութեան և չեն որոնում նրանց մէջ գաղափարական նմանութիւն. ամեն ինչ այնտեղ կոշտութեամբ է. լինում, միայն կենդանական բնագոյներին բաւականութիւն տալու համար, որոնցից ձեր մարդկային սեռը դեռ չէ ազատուել, մինչդեռ մեզանում ամեն ինչ առաջ-նորդում է համարեա հոգեկան յոյզերով:

Կապիտանն ու ֆինանսիստը ապուշ կտրած

միմեանց նայեցին:

—Ճշմարիտ է, օրիորդ... բայց այդ հոգեկան յոյզը, այդ զրգոուժը կարող են առաջ գալ:

—Արուեստական կերպով:—Եւ աղջիկը արծաթահնչիւն կլկլոցով բուռն ծիծաղում էր:— Ասացէք, այդ ի՞նչպէս կարելի է: Չէ՞ որ սէրը երկու ազգակից հոգիների կատարեալ ներդաշնակութիւնն է...: Օ՛, որքան դժուար է նրան հանդիպելը...: Գաղափարների, հոգեկան շարժողութիւնների, ձգտումների այդպիսի լիակատար ներդաշնակութիւնից ժայթքում է կենդանի բոց, որ պատում է երկու էակներին և միացնում նրանց ամուսնական արտադրող համբոյրով:

—Օ՛, օրիորդ,—միաբերան գոչեցին կապիտանն ու ֆինանսիստը, ծնկների վրայ ընկնելով: Նրանց երեսները վառուում էին, աչքերը դուրս էին պոսթկում ակնակապիճներից:—Այդ համբոյրը... միութեան այդ հրաշալի համբոյրը:

Աղջիկը նայեց նրանց վրայ և... ծիծաղեց: Յետոյ նա սեղանի վրայից վերցրեց մի փառակազմ գիրք և խանդավառութեամբ նրա միջից արտասանեց:

«...Այստեղ ազատ է սէրը. ամուսնական գրկախառնումները ոչ մեղք, ոչ էլ ամօթ են: Այստեղ հաւասարակշռուած են սիրոյ իրաւունքները,

և կատարելապէս հաւասար իրաւունքների տէր են երկու սեռերն էլ: Կեղծաւորեալ ամօթխածութիւնը մուտ չէ գործած այստեղ. մուտ չէ գործած և պոռնկութիւնը, որ այնքան սերտ կապուած է ամօթխածութեան հետ և մարդուն դարձնում է գերկենդանի: Մեր մոլորակը միշտ ազատ է եղել այդ ապականութիւնից:»

—Հասկան՞ում էք դուք այդ, երկրային շարաբաղդ մարդիկդ: Մարմնաւոր միութիւնը մի ակնթարթ է տեսում: Հոգեկան միութիւն. ահա ինչն՞ւմն սէրը: Առաջինը, կատարուելով առանց սիրոյ, դառնում է պոռնկութիւն, և պատահում է ձեր վայրենի երկրի վրայ, և երբէք կուլտուրական լուսնի վրայ: Մեր հոգիները կարող են հնչել միաբան, երբ ես, այժմ աղջիկ, իսկ յետագայում լինելու եմ ամուսին ու մայր Բանասականութեան, մինչդեռ դուք, կապիտան, ծառայող էք կոպիտ Ոյժի, իսկ դուք, յարգամեծար վաճառական, ստրուկն էք Ագահութեան ու Վաստակի: Այդօրինակ հրէշաւոր միութիւնից ինչպէս կարող է առաջ գալ որ և իցէ մի լաւ բան:

Եւ իր ամբողջ հասակով վեր կենալով և ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով, որպէս թէ ազգակից հոգուն էր դիմում, աղջիկը բացականչեց.

—Սիրոյ համար ընտրուած բնութիւններին

է վայել ազատ սէրը: Ազատ համբոյր, որ փոխանակում են ազգակից հոգիները կեանքի մէջ միմեանց հանդիպելիս: Բոպէական մարմնաւոր ազատ գրկախառնումներ երկու էակների, որոնց ամբողջ հոգեկան կեանքը համակրութեամբ ու ներդաշնակութեամբ է միայն հնչում: Ո՛վ սուրբ բեղմնաւորութիւն, ես կը տամ անթիւ անհամար դաւակներ իմ հայրենիք Լուսնին:

Սիրոյ այդ ծայրագոյն յափշտակութեան տեսքը մեր երկրային հերոսների մէջ զարթեցրեց նրանց բոլոր վայրենի բնազգները, և յարձակուելով դէպի աղջիկը, նրանք ձեռքերը բարձրացրին նրան բռնելու:

Աղջկայ ազնիւ դիմագծերը մթազնեցին, արհամարհանքի և սրա հետ խորին կարեկցութեան զգացմունքը փայլատակեց նրա աչքերի մէջ, և նա բացականչեց.

— Ահա կենդանիներ:

Այդ խօսքերով նա խլեց ահագին ջրցնցուղը, որից սովորաբար ջրում էր իր պարատէգի ծաղիկները, և հոսանքը դարձրեց ուղղակի մեր մոլորակի ապերախտ ու գարշելի ներկայացուցիչների վրայ...:

## XVI. ԺԱՄԱՆՅԻ ԴՊՐՈՅԸ.

Առաւօտեան մեր բարեկամ Պենսիլերօն ժա-

մանակին յայտնուեց մեզ արթնացնելու և հրաւիրելու արդէն երեկուանից յայտարարուած շահեկան դասախօսութեան:

«Ընդհանրական սովորութիւնների և զգեստների» դահլիճը գտնուում էր մեր բնակարանից մօտ հազար քիլօմետր հեռաւորութեան վրայ: Բայց հազար քիլօմետրը ի՞նչ բան է որ Լուսնի վրայ: Մեր առաջնորդի խորհրդով մեր թևերը տանը թողեցինք, և ուրիշ շատ լուսնաբնակիչներին հետ միասին տեղ բռնեցինք մի փոքրիկ վագօնի մէջ, որ ամբախից կերպով փակած ու յետոյ մտցրած էին մի ահագին ուղիղ խողովակի մէջ, որից պիտի նա մի քանի բոպէում սլանար և հազար քիլօմետր ճանապարհ կտրէր:

Եւ իսկապէս, մենք հազիւ տեղ էինք բռնել վագօնում, երբ արդէն նա թռաւ կայծակի աւրագութեամբ, մի բոպէում մօտ հարիւր քիլօմետր անելով. տաս բոպէից մենք հասանք նշանակուած տեղը:

Դուրս եկանք արմաւենիներով և ուրիշ արեւադարձային բոյսերով գեղանկար կերպով զարդարուած մի շքեղափայլ դարատափի վրայ: Ինտութեան տաճարը, իր տեսակում շինարարական արուեստի միակ յիշատակարանը, շքեղութիւնը վեհութեան հետ իր մէջ միացրած, բարձրանում էր անտառի միջում, իր գմբէթը դուրս ցցած սարսափելի բարձրութեան մէջ: Շէնքի ներսում,

պատերի ուղղութեամբ գալարածն ընթացող գալերիան բռնուած էր արդէն լուսնաբնակիչներով: Ոմանք գալիս էին, ուրիշները գնում, լուեթայն թափահարելով իրանց թևերը՝ լայնարձակ պատուհաններով ներս կամ դուրս թռչելիս. մինչ դասախօսները, իրանց կարգին միմեանց փոխանակելով, շարունակում էին դասախօսութիւնները, որոնք այդ կերպով ամենափոքր ընդհատման էլ չէին ենթարկուում:

Ինչպէս երաժշտութեան, նոյնպէս և գիտական պարամունքների մէջ մի հիմնական սկզբունքով էին առաջնորդուում — անընդհատութեամբ, այնպէս որ ամենմի լուսնաբնակիչ հնարաւորութիւն ունէր իրան միշտ նուիրելու մտաւորական գործունէութեան իր ցանկացած ճիւղին, երբ էլ որ յօժարութիւն զգար այդ բանին:

Դասախօսը լուսնային լեզուով խօսում էր ըարոյական զարգացման մասին: Բայց մեր յայտնուելուն պէս, նուրբ սիրալիութեամբ նա սկսեց իտալերէն խօսել:

Ահա, ինչ որ մօտաւորապէս դուրս քաղեցի նրա դասախօսութիւնից.

«Կուլտուրայի նախնական մակերևոյթի վրայ բարոյականութեան բոլոր արտայայտութիւնները կարող են դրուել մի վերնագրի տակ, այն է — բարեպաշտութեան:

«Մեր նախահայրերը Լուսնի վրայ, այժմ

արդէն անհետացած և գուցէ Երկրի այժմեան մարդու կերպարանքին շատ մօտիկ էակներ, երկար ժամանակ հաւատում էին, թէ բարոյականութիւնը բացառապէս մարդուն սեփական մի յատկութիւն է: Սրանից, հաւասարապէս և խօսելու ձիրքից, զանազան կրօնական ու փիլիսոփայական դրութիւնների ներկայացուցիչները ջանացել էին հետևել, թէ մարդը առանձնաշնորհալ մի արարած է, տարբերելով նրան բոլոր մնացեալ կենդանի էակներից և ինչ որ մասնաւոր կանխասահմանութիւն վերագրելով նրան տիեզերքի մէջ:

«Բայց այդ անպայման սխալ ենթադրութիւն էր:

«Կան մարդիկ, որոնց բարոյական զգացմունքը բացարձակապէս նուազ աստիճանով է զարգացած, քան ուրիշ շատ կենդանիների մէջ: Այդպէս են ստորին ցեղերը:

«Եւ որովհետև այստեղ ներկայ են երկրային յարգելի հիւրեր, նրանց աւելի հասկանալի լինելու համար ես կը բերեմ օրինակներ, որոնք, իդէպ է ասել, նկատուած են արդէն մի երևելի անգլիացու կողմից, Չարլզ Գարվինից, և այդ օրինակները ես վերցնում եմ հէնց այժմ մեր յիշած Երկրից:

## XVII. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ.

«Սկսենք լեզուից:

«Անտարակուսելի է, թէ մարդս լեզուով է որոշուում կենդանիներից. բայց, չը դիմելով Կաստի անուն մի գուարճախօս Արբայի «խօսող գազաններ» գրքին, որ ծիծաղելի կատակներից այն կողմը չէ անցել, մենք կարող ենք գտնել կենդանիների մէջ խօսքի սաղմը:

«Եղջերուն, շունը, ձին, իրանց անունը լըսելիս՝ ականջները սրում և իրանց ուշադրութիւնը լարում են: Միևնոյնը անում են և կուղբերը:

«Շունը մի քանի բառերի նշանակութիւնը հասկանում է, ինչպէս՝ «Կանգնիր, որոնիր, գլատիր, յետ դարձիր, ևն. ևն.» որոնցով պարծենում են որսորդները Երկրի վրայ:

«Թուխս եկած հաւը, ուրուրը տեսնելիս, ինքնօրինակ մի ճիշ է արձակում, որ հասկանալի է ոչ միայն իր վառիկներին, այլ և իր բոլոր համասեռներին:

«Մի քանի կենդանիներ՝ իրանց հօտի պահպանութեան համար՝ պահակներ են դնում, որոնք հերթով փոխանակում են միմեանց: Պահպանները, վտանգի դէպքում, արձակում են ինքնաշատուկ մի աղաղակ: Այդ տեսակ կենդանիների թուին են պատկանում՝ քարայծերը, լեռնային մկները, ագուաները:

«Մի քանի կենդանիներ մինչև այն տեղն են հասցնում, որ իրանք կարող են առանձին խօսքեր արտաբերել: Յիշենք թութակը, կաշաղակը, սարեակը, սև տորդիկը ևն. ևն.:

«Բրէժը պատմում է մի թութակի մասին, որ կարողանում էր մինչև իսկ բաւական երկար նախադասութիւններ հասկանալ, և ինքն էլ իհարկին շատ պատշաճօրէն գործ էր ածում նրանց: Երբ, օրինակ, տէրը նրան ասում էր «Բարի լոյս», այն ինչ երեկոյ էր, թռչունը պատասխանում էր նրան. «Բարի երեկոյ»: Եթէ տէրը դուրս էր գլնում՝ մենակ, թութակը կանչում էր. «Բարի ճանապարհ, պարոն», իսկ եթէ գնում էր մի քանի հոգու ընկերակցութեամբ, լսում էր նրա աղաղակը. «Բարի ճանապարհ, պարոններ»:

«Բացայայտ էր, որ այդ թռչունը ոչ միայն խօսքերը մեքենաբար բերան էր արել, այլ և հասկանում էր նրանց իմաստը:

«Միւս կողմից, մինչև այսօր էլ կան վայրենի ժողովուրդներ, օրինակ, Քօ ցեղը Հնդկաստանում, Դամմարաները, Արֆակները և ուրիշներ, որոնց լեզուները՝ մեծ մասամբ՝ միավանկ են, բոլորովին չունեն մի կարգ հասկացողութիւններ արտայայտող բառեր: Այդ ժողովուրդներից շատերը հաշիւ բնաւ չը գիտեն, այնպէս որ մատներով են համարում, և «հինգ» արտայայտելու համար, ասում են «ամբողջ ձեռք»: Սրանից հե-

ուս չէ գնում նրանց միտքը:

«Այդ բոլորից հետևում է, որ կենդանիներից ամենազարգացածը կարող է մտաւոր նոյն մակերևոյթի վրայ գտնուել՝ մարդկանցից ամենայետաճանցների հետ:

«Եւ քանի որ մեզ անյայտ է լեզուի ծագումը, մենք արդէն անկարող ենք ճշտութեամբ սահմանել, թէ ինչո՞ւն է մարդկային ու կենդանային խօսքի տարբերութիւնը, և արդեօք այդ տարբերութիւնը չէ՞ որոշում աւելի շուտ քանաւորէն քան թէ որակորէն»:

Այն պահուն, երբ անագին սինէմատօգրաֆի վրայ մեր առաջով անցնում էին այն էակների պատկերները, որոնց մասին յիշում էր դասախօսը, կապիտանն ու մօնսիները իրանց դժգոհութիւնն էին յայտնում խոզի խանչիւնի նմանող ինքնակերպ հնչիւնների օգնութեամբ, և դրանով կարծես հաստատում էին միայն գիտնական դասախօսի դիտողութիւնները:

Վերջինս շարունակեց իր դասախօսութիւնը:

### XVIII. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԷՉ.

«Պերտին հաստատում է, որ կենդանին ըզգում է ուրախութիւն, վիշտ, սէր, ատելութիւն, երախտագիտութիւն, ժլատութիւն, վեհանձնութիւն, հպարտութիւն, և լիովին ենթակայ է նոյն

բորբոքումներին ու կրքերին, ինչ որ մարդը:

«Վեթցելը, ուսումնասիրելով սիրոյ զգացման արտայայտութիւնները կենդանիների մէջ, ասում է, թէ նրանք ունեն գեղեցկութեան իրանց իդէալները, և թէ խանդոտութեան զգացումը շատ կենդանիների երբեմն մինչև իսկ անձնասպանութեան է առաջնորդում»:

Դրանից յետոյ, դասախօսը ցոյց տուեց էքրանի վրայ շահագրգիռ պատկերներ, որոնք ցոյց էին տալիս Ներթօկի գննութիւնները կենդանիների խելքի վրայ:

«Փղերը պոկում են արմաւենու տերևները և իբր հովհար գործածում սաստիկ շփին. կուղբերը շինում են խրճիթներ, որոնք վայրենիների խրճիթներից ոչնչով պակաս չեն: Չարլզ Դարվինը ինքը տեսել է, ինչպէս օրանգուլթանը ներս էր մղում տախտակի ձեղբուածի մէջ ցիցը և իբր բեւեռ գործածում»:

«Գալով բարոյականութեան, պէտք է ասել, թէ կենդանիների բարձրագոյն տեսակներից շատերը այդ մասին աւելի բարձր են կանգնած մարդկային զանազան ստոր ցեղերից:

«Օրինակի համար, Մանդինգները մէջ ամուսնութիւնը հասցրած են կանոնաւոր ստրկութեան: Որդեսպանութիւնը ամենատարածուած երևոյթն էր հիւսիս—ամերիկեան հնդիկների և հօտտենդօսների մէջ, որոնք դրանում մի յան-

ցաւոր բան չէին տեսնում: Նոյնպէս և Արքակների ու Մօսորիների մէջ երկուորեակներէից մէկի մահացումը կամ կանանց սպանութիւնը մի ամենասովորական երևոյթ էր: Հօտաենդօսների մէջ սովորութիւն կայ ծերացած ծնողներին տանել ամառի տեղ և թողնել ճակատագրի քմահաճոյքին, որպէս զի քաղցից մեռնեն:

«Բացի այդ, մինչև այսօր դեռ կան մարդկային մտով կերակրուող բաւական ցեղեր:

«Այժմ նայենք, միւս կողմից կապկին:

«Կապիկը հասարակասէր էակ է, բոլոր թոյլերին կամ հիւանդներին ինքնակերպ կարեկցութիւն ցոյց տուող, եթէ մինչև իսկ նրանք կապիկներ էլ չը լինին...»:

Ես կապիտանին դիմեցի այս խօսքերով:

— Ուրեմն, կապիկը յաղթահարել է ո՛չ միայն եսականութեան զգացմունքին, այլ և ազգայնական ու ցեղային ատելութեան:

Բայց կապիտանը սուր կերպով նայեց ինձ վրայ և շարունակեց լռել:

Այդ միջոցին դասախօսն ասում էր.

«Պերաին պատմում է, թէ կապիկները վերին աստիճանի զգուշութեամբ լուանում են իրանց ընկերների վէրքերը և նրանց ծածկում ու կապիկում տերևներով, արիւնահոսութիւնը դադարեցնելու համար:

«Կապիկների սէրը իրանց փոքրիկներէի վե-

րայ առածի կարգ է անցած. նրանք կերակրում, փայփայում, մաքրում, խաղալիքներ են հայթայթում նրանց, և կերակրի ամենալաւ պատանները տալիս են աւելի փոքրերին ու հիւանդներին: Յայտնի բնախոյզ Բրէմը այսպիսի հետեւութիւն է անում. — կապիկը իր կենդանականութիւնը յայտնում է իր սեռական սիրոյ մէջ, բայց իր բարոյական մաքուր սիրոյ մէջ նա մարդուն կարող է իբր օրինակ ծառայել»:

Այդ բոլէին դահլիճի մէջ յանկարծ մի անսկարագրելի իրարանցում բարձրացաւ: Նստարանները աղմուկով շուռ ու մուռ եկան, լսողները բնազդօրէն յետ ու յետ քաշուեցին, և բոլորի գլուխները ու թևերը վրայով մենք տեսանք ծանրաբեռ, անձոռնի մի կերպարանք, որ արձակում էր դէպի բեմը, սուրը ճօճելով:

Դա մեր կապիտանն էր, որին ամբողջ ժամանակ կատարեցնում էին դասախօսի բացատրութիւնները. բայց պրօֆեսօրի վերջին խօսքերը նրան արդէն մոլեգնութեան հասցրին: Նա սլացաւ դէպի սենէմատօգրաֆը, որպէս զի սրի մի հարուածով վրէժն առնէ այն վիրաւորանքների համար, որ անզգոյշ գիտնականը հասցրել էր մարդկային սեռին:

### XIX. ՀՈԳԵԿԱՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆԸ

Չը նայելով մինչև անգամ մեր բարի Պենսիերոյի ներկայութեան ու միջամտութեան, անկարելի էր թուում մոլեգնած կապիտան Պետարդոյին պատասպարել լուսնաբնակիչների գայրոյթից, կամ աւելի ճիշտ, ծայրայեղ կարեկցութիւնից: Դահլճի մէջ իր կատաղի արշաւի ժամանակ մի քանի հանդիսականների գլուխները թեթևօրէն վիրաւորելով և մի քանի կողեր շարդելով, կապիտանը շուտով զրկուեց կրկին նոյնօրինակ որ և է մի բանի ձեռնարկելու բոլոր հնարաւորութիւնից: Սառը դուշերը և ելեքորական հոսանքների ազդեցութիւնը նրան իսկոյն հանդարտեցրին. բայց պէտք եղաւ հանդիսականներին ապահովել նրանից: Եւ ահա առանց յապաղելու նրա մօտ վագեցին չորս վերահսկիչ, ապշեցնող ճարպիկութեամբ նրան բռնեցին և առանց ամենափոքր փնաս հասցնելու կոխեցին նրան մի ահագին՝ ներսից ռետինով պատած՝ արկղի մէջ, որից դուրս մնաց միմիայն կապիտանի գլուխը: Այդ կերպովնա զրկուեց իրան կամ ուրիշներին փնաս հասցնելու կարելիութիւնից:

Յետոյ, ծառայողները դուրս տարան արկղը կապիտանի հետ և դրին հողեկան հիւանդների բուժարանի օդանաւի վրայ:

Մեզ բոլորիս թոյլատրուեց ուղեկցել մեր չարաբաղդ ընկերոջը:

Մինչ մեր օդանաւը սլանում էր անհաւատալի արագութեամբ, Պենսիէրօն ասաց.

— Կապիտանը իրան մոռացաւ և մի այնպիսի արարքի մէջ զտնուեց, որ դուք, Երկրի վրայ, պիտի անուանէիք կամ հերոսութիւն, կամ ոճրագործութիւն. իսկ այստեղ, Լուսնի վրայ, այդպիսի արարքը նկատուում է իբր զուտ ախտաբանական երևոյթ: Իսկապէս, մենք այժմ ձեր խեղճ ընկերոջ տանում ենք գժատուն:

— Այդ դեռ այնքան վատ չէ. մենք վախենում էինք, որ այդ բանը նրա համար տաժանակիր աշխատանքներով կրվեր ջանար:

— Ա՛յ, բան ասացիք: Այստեղ, Լուսնի վրայ, ո՛չ միայն տաժանակիր աշխատանքներ, այլ բանտեր էլ չը կան: Մեր օրէնքները էապէս ուրիշ բան չեն ներկայացնում, բայց եթէ առողջապահական կանոններ, որ ամենքը պարտաւոր են պահել, և այդ օրէնքների խախտումը մեղանում իբր շար կամքի հետևանք չէ համարուում, այլ իբր մի երևոյթ անխելութեան, և հէնց այդ նկատումով էլ յանցաւորին ենթարկում են բժշկութեան:

— Դրա նման մի բան էլ մեր ոճրագանները յայտարարեցին, օրինակ Լօմբրօզօն և Ֆերրին:

— Պարզ բան է, որ նրանք իրաւացի են: Նրանց անունները քաջ յայտնի են Լուսնի վրայ: Իսկապէս այժմ և ձեզանում, Երկրի վրայ, դը-



րական գիտութիւնը ուղիղ ճանապարհով է ընթանում, մանաւանդ այն ժամանակից, երբ յանցանքի ուսումնասիրութիւնը (որպիսին արել են ոճրագէտ—կլասիկները) փոխուեց յանցագործի իր իսկ անձի ուսումնասիրութեան: Այդտեղից արդէն մի քայլ է մնում բժշկութեան եղանակը դանելու համար, փոխանակ պատժի աստիճանները սահմանելու: Բայց ձեր ոճրագէտ—մարդաբանները սխալուում են, ենթադրելով ի՞նչ անուղղելի ոճրագործների գոյութիւնը, որոնց պէտք է բնաջինջ անել, ինչպէս գիշատիչ գազանների: Մենք հասանք մեր թռիչքի նպատակին:

Խելագարների տունը, կամ եթէ ուզոււմ էք, բանտը Լուսնի վրայ ներկայացնում է մի ահագին հրապարակ, որի վրայ ցրուած էին տնակներ, անտառակներ ու պարտէզներ: Այնտեղ կան նոյնպէս մի քանի մեծ շէնքեր: Այդ բոլորը շքշափակուած չէ, և ոչ մի տեղ չեն տեսնուում ո՛չ նիգեր, ոչ էլ վանդակներ:

—Ամենաընտիր վարելահողի ինչ ահագին մաս է այստեղ իզուր կորչում,—բացականչեց Ֆինանսիստ Վենտրեսկան, աչքերը խոշոր բաց անելով:

—Կամաց, լուեցէք,—փսփսացի ես նրան,— թէ չէ քեզ էլ կը նստեցնեն գժատուն:

—Այդ մեծամեծ շէնքերը—գիմեցի ես յետոյ Պենսիլեյրօյին—անտարակոյս խցիկներ են և

բանտարկութեան ու պատժի տեղեր:

Պենսիլեյրօն ծիծաղեց:

—Բանտարկութիւն, պատիժ: Գուցէ դուք կարծում էք, թէ այստեղ Վենետիկում էք զանրուում գազանացած ֆանատիկոսների ձեռքում...: Այդ շէնքերը՝ թատրոն, ուսումնարան ու կօնցերտի դահլիճներ են:

—Մի՞թէ:

—Ի հարկէ. մեր մէջ այդպէս է բժշկուում անխելքութիւնը:

Մինչ այդ, մեր դէմ դուրս էին եկել մի քանի բժիշկ, «հիւանդի» դրութիւնը իմանալու, որի հիւանդանալու մասին նրանց արդէն յայտնել էին ըադիօզրաֆով:

Մեր բարեհոգի Պենսիլեյրօն ցած ձայնով խօսեց բժիշկների հետ: Մենք տեսանք, թէ ինչպէս վերջիններս ամենքը միասին բարձրաձայն ծիծաղեցին, և այդ մեզ յուսալ տուեց, որ մեր դժբաղդ ընկերոջ գործը կարող է, ո՛վ գիտէ, բարեյաջող ելք ստանալ:

Եւ իսկապէս, մի քանի բույէից յետոյ, կապիտանը ազատ թողնուեց, բայց նրանից վերցրին սուրը, խոստանալով յետ տալ Երկիր վերադառնալու վայրկեանին:

—Սա մի գործիք է,—ասաց ծերունի բժիշկը, ուզելով համոզել կապիտանին հնազանդելու,—որ Երկրի վրայ կարող է ազդեցութիւն գոր-

ծել ուրիշները վրայ, իսկ այստեղ ամեն բանից աւելի վտանգաւոր է հէնց ձեզ համար:

## XX. ԿՕՆՅԵՐՏ

Այդ վայրին աւիամայ այցելութիւն տալու առթից օգտուեցինք, նայելու համար կօնցերտի դահլիճը, որտեղ, ինչպէս մեզ ասացին, կարելի էր ծանօթանալ ամեն տեսակի երաժշտութեան հետ:

Դահլիճը, որ շինուած էր կատարելապէս մեր արդէն տեսածների ձևով, լիքն էր զանազան հասակի ու դասաբաժանմունքի հոգեկան հիւանդներով: Մեզանում այդպիսիները ոճրագործներ պիտի կոչուէին: Ըստ երևոյթին, այդ հիւանդները արտաքին ոչ մի աննօրմալ բան չէին ներկայացնում: Դրանք պատահաբար յանցանք գործած անձեր էին, որոնց ազատութիւնը վերադարձուած էր, հէնց որ անցնում էր ժամանակաւոր բորբոքումը և նրանք կրկին վերստանում էին կորցրած հոգեկան հաւասարակշռութիւնը: Այդ անձանց մեծ մասը պարզապէս գտնուած էր հսկողութեան տակ. ոմանց ընկերանում էին վերահսկիչներ, որոնց պարտականութիւնն էր նայել, որ «հիւանդները», մինչև իրանց վերջնական ապաքինումը, չը կարողանային նորից որ և է վրաս պատճառել ուրիշներին: Եւ զրա մէջ էլ կայանում էին յանցաւորների վերաբերութեամբ

ձեռք առնուած նախազգուշութեան բոլոր միջոցները, և հասարակութեան կողմից որ և իցէ խիստ սանձահարութեան վայրենի ձգտումի նշանն անգամ չը կար:

Մտնելով դահլիճը, հնչիւնների հեղեղը ինձ խլացրեց: Պատերը դողում էին հրաշափառ օրկեստրային սիմֆօնիայից, որպիսին երբ և իցէ հասած է մարդկային լսողութեան: Այդ միջոցին մի երաժիշտ միայն նուագում էր էստրադայի վրայ դահլիճի խորքում, ոգևորուած դիրքով, երգեհոնի նման մի բանի առաջ կանգնած, որի հրակայական խողովակները՝ սեթևեթ կերպով գալարուելով՝ ձուլուում էին այլ խողովակների հետ, որոնք զարգերի ձևով նկարուած էին դահլիճի պատերի ու առաստաղի վրայ:

— Ի՞նչ բան է դա, — հարցրի ես, — Օրկէստր է:

— Օրկէստր, — կրկնեց Պենսիէրօն: — Ա՛յ, այո՛,

հասկանում եմ: Դուք այստեղ որոնում էք իսկական գործիքներ և նրանց վրայ նուագող մարդիկ: Բայց մեր այս երաժշտական գործիքների վրայ նուագում են ոչ թէ լուսնաբնակիչները, այլ ելեկտրականութիւնը: Իդէալական օրկէստրը արուեստագէտ կօմպօզիտօրի ուղեղումն է, իսկ մեքենական օրկէստրը կատարում է այն ամենը, ինչ որ երաժշտական ոգևորութեամբ յղանում ու զարգացնում է հեղինակը իր երեւակայութեան մէջ և ինչ որ նշանակում է նա ինդիկատօր (նը-

շանացոյց) գործիքի վրայ: Այս հրաշալի սիմֆոնիայի գեղեցկութիւնն ու հզօրութիւնը նրանով է պայմանաւորուում, որ կօմպօզիտօրը չի հարկադրուի, ինչպէս մարդկային օրկեստրում, զուտ տեխնիքական բոլոր կարելի դժուարութիւններին յաղթահարել, որոնք կարող են նրա ոգևորուած ֆանտազիայի թռիչքը կանգնեցնել:

— Ահա զարմանալի բան: Ախր այդ սքանչելի է: Ներեցէք անհամեստութեանս, արդեօք այստեղ, Լուսնի վրայ, ձեզ յայտնի են երկրային որ և իցէ կօմպօզիտօրներ ու երաժիշտներ:

— Հապա չը լինէի՞ն: Բացառապէս երաժշտութեան և միմիայն նրա մէջն է, որ երկիրը երևան է հանել քիչ թէ շատ ընդունակութիւն դէպի վսեմը:

— Ա՛խ, որքան ուրախ եմ ես այդ բանի համար: Ի՞նչ մեր մեծ երաժիշտներից սլոն էք ճանաչում:

— Բոլորին էլ: Բայց մենք սովորաբար նուագում ենք այստեղ նրանցից միայն ամենահռչակաւորների արտագրութիւնները:

— Ամենահռչակաւորները՞:

Իմ հետաքրքրութիւնը վերին աստիճանի գրգռուած էր:

— Ձեր զարդ ու պսակները, — ասաց Պէնսիերօն, ինձ ծայրայեղօրէն շանթահարող վըստահութեամբ, — երաժշտութեան մէջ հետևեալներն են. Բեթհովէն, Պալեստրինա, Բախ, Կե-

րուբինի, Վաղներ և Բելլինի:

Այդ անձաւորութիւնների թւումն ու համադրութիւնը, արուեստի մասին իրանց ունեցած այնքան զանազանակերպ հայեացքներով և ձիրքերի առանձնայատկութիւններով, ինձ շփոթեցրեց, և ես պատրաստուեցի այդ առարկայի մասին աւելի բացատրութիւններ լսելու: Բայց կապիտանը, որ մինչև այդ ժամանակ իրան հանգիստ էր պահել այս հասարակութեան մէջ, նորից սկսեց գրգռումի նշաններ երևան հանել, և մենք այդ պատճառով վճռեցինք հեռանալ այդտեղից:

Սելադարների բուժարանը թողնելուց առաջ, Պենսիէրօն ասաց մեզ.

— Քանի որ այստեղ ենք, ես կուզեմ ձեզ ցոյց տալ այն երկու յիշատակարաններից մէկը, որոնց կանգնեցրած են Լուսնի վրայ երկրային մարդկանց:

— Պատուիս վրայ կերգնում, — բացականչեց կապիտանը, — որ դուք անտարակոյս Նապօլէօն Աի կամ Վիկտօր էմմանուէլի յուշարձանն էք կանգնեցրել:

Մօնսիները գլուխն օրօրեց ու ասաց.

— Աւելի հաւանական է Ս. Թովմաս Ակվիւնացու կամ Պիոս IX պապի:

— Ես իմ ձայնը կը տայի Կրիսպիլի յիշատակարանին, — նկատեց ֆինանսիստ Վենտրես-

կան, յիշելով այն արտօնութիւններն ու վատասակները, որ այդ մեծ մինիստրը տուել էր իր ընկերներին Ֆինանսական գործողութիւնների մէջ:

Պենսիլերօն ժպտաց, և ցոյց տալով խելագուրկների տան մէջտեղում դրուած կիսարձանի վրայ, ասաց.

—Նայեցէք:

Եւ մեր աչքերի առաջ կանգնած տեսանք Ջօզուէ Կարդուլչչիի<sup>1</sup> կիսարձանը:

—Օ՛, բայց ինչո՞ւ համար հէնց Կարդուլչչին:

Ծերունին իր անփոփոխ ժպտով պատասխանեց:

—Որովհետեւ բոլոր բարեպաշտ իտալացիներից նա միայն համարձակուեց մեր ազատ Լուսինը «երկնային արծաթադրամ» կոչել: Նրա այդ յանցանքը պատճառ եղաւ, որ մենք նրան տեղ տուինք հէնց այստեղ. մենք չենք պատժում վիրաւորանք հասցնողներին, մենք բժշկում ենք յանցաւորներին:

—Իսկ միւս յիշատակարանը, — հարցրեց Րատալանգան:

Պենսիլերօն հանդիսաւորապէս ձեռքը մեկնեց դէպի հարցնողը.

Միւս յուշարձանը նուիրուած է մօր կողմից ձեր պանծալի նախահայրերից մէկին, Ան-

<sup>1</sup>) Իտալացի հռչակաւոր բանաստեղծ, վերջին տարիներումս վախճանուած:

տօնիօ Ջամբէկկարիին, Մօնզօլֆիէրի բարեկամին, ձեր մոլորակի վրայ ձեռնարկուած օդազնացային փորձերի առաջին զոհին:

Բոլորը պատկառանքով բաց արին գլուխները Րատալանգայի առաջ, որ յանկարծ ազգակցութեան լուսապսակն ստացաւ նոյն իսկ Լուսնի բնակիչներէ աչքում:

## XXI. ՄԵՆԵՆԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ուրեմն, վճռուած է, պէտք է վերադառնալ Երկիր:

Այդպիսի արագ մեկնումի պատճառը, էպէս, մեր Ֆինանսիստը եղաւ, որը երէկ երեկոյեան, հեռադիտակի միջով հայեացք նետելով Տիվօլիի վրայ, տեսել էր, որ իր բանուորները պատրասաւում են գործադուլ անելու:

Պենսիլերօն կարգադրում էր մեր մեկնումի բոլոր պատրաստութիւնները: Մենք արտասուալից աչքերով տեսնում էինք, թէ ինչպէս լայնածաւալ մարգագետնի վրայ հանդարտ ձօձուում էր մեր սեփական օդապարիկը: Լուսնաբնակիչների ամբոխը հաւաքուել էր մօտերքը, նայելու համար իտալացիների Երկիր մեկնելու տեսարանին, որ հազուադիւրս բան էր իրանց համար: Բազմաթիւ սիրունատես աղջիկներ ծաղիկներ ու սուվընիւրներ էին ընծայում մեզ ի յիշատակ:

Ինձանուամ միտք ծագեց, որ մեզ էլ պէտք էր մի բան թողնել մեր այցելութեան յիշատակի համար, բայց բացարձակապէս չը կարողացայ ոչինչ մտաբերել, որ արժանի լինէր մեր հիւրամեծարներին, զարգացմամբ մեզանից այնքան բարձր կանգնած: Ֆինանսիստը, որ այդ միջոցին միևնոյն բանի վրայ էր մտածում, ինչ որ ես, հարցրեց ինձ շշուկով.

— Ես կարծում եմ, մեր կողմից մի բան պէտք է տալ նրանց իբր վարձատրութիւն:

Այդ միջոցին, կապիտանը, որ մի քանի ժամանակից ի վեր ինչ որ անսովոր անհանգստութիւն էր ցոյց տալիս, կռացաւ ականջիս ու մրթմրթաց:

— Սարսափելի բան, հիմա ես ի՞նչ անեմ: Միթէ անկարելի է սպասել մի երկու ըոպէ:

Այդ վայրկեանին նրա հայեացքն ընկաւ հսկայ թխտենիների անտառակի վրայ և նա չորս ոտքով նետուեց այնտեղ և...:

Այդ եղաւ այն ամենը, ինչ որ կարողացանք թողնել երկրային մարդիկս՝ մեր գալստեան իբր յիշատակ՝ այնքան կենսակիրթ մոլորակի վրայ:

## XXII. ԼՈՒՍՆԱԲՆԱԿԻԶՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒ- ԹԻԻՆԸ.

Երբ մենք դիմում էինք ամբոխի միջով դէպի մեր օդապարիկը, նկատեցինք որ շատ

լուսնաբնակիչներ մեծ յարգանքի նշաններ էին ցոյց տալիս սրան նրան:

— Երևի դրանք պաշտօնաթող զեներալներ են, — յայտնեց կապիտանը:

— Կամ աւելի հաւանական է, խոշոր սեփականատէրներ են, — ասաց ֆինանսիստը:

— Իրանք պարզապէս ուսուցիչներ ու բժիշկներ են, — յայտնեց լրջօրէն Պենսիէրօն. — Ուսուցիչ ու բժիշկ, ահա կուլտուրականութեան երկու սիւնը: Այդ յենարաններին կոթնած՝ ամեն մի հասարակութիւն կամ արդէն կուլտուրական է, կամ կարող է լինել:

— Սակայն, — ընդմիջեց նրան գերապայծառը, նորից մեզ միանալով, — կրօնը, բարոյականութեան պահպանողը...

— Բարոյականութիւն — շարունակեց աւելի հանդիսաւոր ձայնով Պենսիէրօն, կարծես ցանկալով մեզ վերջին խրատը տալ: — Բարոյականութիւնը՝ վերացական մի հասկացողութիւն է: Բոլոր բարոյական օրէնքները պէտք է յանդիման միմիայն լիովին թանձրացեալ պարտականութեան, այն է՝ առողջապահութեան պահպանման:

— Առողջապահութեան:

— Այն. մտքի և հոգու առողջապահութեան: Այն ամենը, ինչ որ խօսուում է մարդկային ցեղի մասնաւոր առաքելութեան մասին, կատարելապէս քմահաճ ենթադրութիւն է: Գոյութիւն ունի

միայն մի փաստական պարտականութիւն. պահպանել մեր գոյութիւնը, որ ներկայանում է իբր մի անտարակուսելի բարիք ինչպէս մեր անձերի, նոյնպէս և ուրիշների համար: Մարդս պէտք է առողջ լինի ոչ թէ միայն ինքն իր համար, այլ և յանձին սերունդների, որոնց վիճակուած է նրան փոխանակելու: Օգտուել կեանքից՝ նշանակում է՝ միջոցներ որոնել նրա երկարակեցութեան համար: Ահա պարտականութիւն, որ մենք ունենք մեր անձի վերաբերմամբ և մեր նմանների վերաբերմամբ: Կեանքից օգտուելու համար՝ հարկաւոր է նրան ուսումնասիրել. և դա մի այնպիսի խնդիր է, որի իրականացման համար է կոչուած ուսուցիչը. իսկ կեանքը երկարելու համար՝ պէտք է նրան պատասպարել. դա էլ բժշկի գործն է:

—Ուրեմն դուք շատ աւելի երկարակեանք էք մեզանից:

—Անտարակոյս: Ես երկու հարիւր տարեկան եմ, և կարող եմ մինչև երեք հարիւրի հասնել: Հոգեկան անգորրութիւն, մարմնական խելացի մարզանքներ, մարսողական գործողութիւնների պակասեցում, զգուշացում աւելորդ պարարտութիւնից, որ ամեն տեսակ հիւանդութիւնների տրամադիր է դարձնում մարմինը, ոյժերի բնական սպառման վերականգնում,—ահա այդ ամենը հասցրել է մարդկային ցեղը կուսնի

վրայ օրգանական զարգացման այն աստիճանին, որի վրայ մարդիկ արդէն այլ ևս չեն մեռնում երբէք հիւանդութիւններից, այլ դանդաղօրէն հանգչում են ծերութիւնից: Եւ սլ գիտէ, գուցէ հասնի և այն օրը, երբ...

Նա չաւարտեց իր նախադասութիւնը: Մենք եկել էինք մեր օդապարիկի մօտ:

—Ուրեմն, մնաք բարով:

Պէնսիլեթրօն ծիծաղեց:

—Մնաք բարով: Իսկ դուք ինչպէս էք թըռչելու:

Մենք մտամոլոր միմեանց նայեցինք:

—Ճիշտ որ. և իսկապէս, մենք ինչպէս ենք թռչելու:

Պէնսիլեթրօն դեռ ժպտում էր: Յետոյ նա ցոյց տուեց ոչ այնքան մեծ մի օդային նաւ, բեւեռած, որ խիստ արագութեամբ դէպի մեզ էր սլանում, որպէս զի մեր օդապարիկը կապէ իր խելքին, և ասաց.

—Ինչպէս կը թռչէք այնպէս, ինչպէս որ թըռչել էիք...: Բայց առ այժմ նստեցէք ինձ մօտ և ճանապարհին ես ձեզ կը պարզեմ բոլոր գաղտնիքը:

Մենք բարձրացանք Պէնսիլեթրօյի հետ՝ կախ

ընկած թեթև ուրուռն սանդուխով՝ երկաթեայ օղանաւի վրայ:

Ներքևում, հաւաքուած աճազին բազմութեան մէջ խլացուցիչ ծափահարութիւններ լրսուեցին: Կապիտանը կաշուամանից հանեց բեւօլվերը և սկսեց արձակել օդի մէջ: Այդ արձակումները վախեցրին բոլոր ճնճողուկներին Լուսնի վրայ:

Մօնսիները այդ ժամանակ օրհնում էր լուսնաբնակիչներին, լիովին վստահ, թէ նրա այդ շարժումները պիտի գնահատուեն ժողովրդից... որ նրանցից ոչինչ չէր կարող հասկանալ:

Մենք մեր կարգին, հին բայց և այնպէս սիրուն սովորութեան համաձայն, սկսեցինք մեր հրաժեշտը տալ լուսնաբնակիչներին մեր թաշկինակները շարժելով, (աւանդ, այդ թաշկինակները այստեղ էլ հէնց ապացոյց էին՝ նրանց հետ համեմատած՝ մեր բնախօսական յետամնացութեան) և օգային համբոյրներ ուղարկեցինք գեղեցիկ լուսնաբնակչուհիներին:

Ծափահարութիւնների մի պայթիւն ևս, «կեցցէ»-ի նոր աղաղակներ, և ահա նաւի երկաթեայ դուռը կողպուեց և նա բարձրացաւ նետի պէս, տանելով իր հետ անհուն տարածութեան մէջ մեր օդապարիկը:

— Զարմանալի բան, — բացականչեց Ֆինանսիստը, որ աստղաբաշխութեան քիչ էր տե-

ղեակ: — Մենք միշտ դէպի վեր ենք թռչում, իսկ ես կարծում էի, թէ մենք պէտք է դէպի վայր իջնենք:

### XXIII. ԳԱՂՏՆԻՔԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ.

— Ուրեմն, — դիմեցի ես Պենսիլթրօյին, հէնց որ տեղաւորուեցինք մեր օղանաւի ռետինածածկ պատերի երկայնութեամբ շինուած նստարանների վրայ, — սիրալիր եղէք բացատրելու մեզ...

— Վերին աստիճանի մի պարզ բան է: Բայց նախ երդուեցէք, որ դուք չէք պատմի Երկրի վրայ, ինչ որ ես այժմ հաղորդելու եմ ձեզ:

— Ես երգում եմ բոլորի համար, — բացականչեց մօնսիները ձեռքը բարձրացնելով:

— Շատ բարի, — ասաց Պենսիլթրօն, — ուրեմն լսեցէք ինձ: Դուք միշտ կարծում էիք, թէ ընկել էիք Լուսնի վրայ:

— Իհարկէ:

— Ընդհակառակը, այդ ես էի, որ ձեզ այստեղ բերի:

— Զէ<sup>\*\*\*\*\*</sup>:

Չինգ հարցական նշաններ, փոխանակ մեր հինգ դէմքերի:

— Հասկացէք ինձ. — շարունակեց Պենսիլթրօն: — Բովանդակ տիեզերքը, իր ամբողջ տարածութեան մէջ, իր բոլոր անհամար աստղերի վր-

րայ զանազան ցեղի, տեսքի ու տեսակի բնակիչներ ունի: Բոլոր այդ էակները ենթարկուած են անվերջ փոփոխութիւնների: Մենք, Լուսնի բնակիչներս, ձեր անմիջական յաջորդներն ենք և միայն մէկ աստիճանով ենք ձեզանից բարձր կանգնած ընդհանրական զարգացման սանդուխի վրայ: Կան մոլորակներ աւելի ևս զարգացած կուլտուրայով, քան մերը: Տեղից տեղ շարժուելու համար մեր ունեցած գերազանց մեքենական միջոցների շնորհիւ, մենք հնարաւորութիւն ունենք այցելելու ինչպէս ձեր Երկիրը, նոյնպէս և աւելի կուլտուրական մոլորակները: Միակ բանը, որ կարող է այդ գործում մեզ համար իբր խոչընդոտ ծառայել, դա մեր գոյութեան կարճատևութիւնն է:

Մենք վերցրինք մեր գլխարկները և խոնարհ գլուխ տուինք:

— Բայց այդ պարագայում ինչո՞ւ համար դուք չէք յայտնուում Երկրի վրայ, ընդհանրական կուլտուրականութիւնը մտցնելու համար այնտեղ:

Յարգելի ձերուկը բացասաբար շարժեց զըլուխը և ասաց.

— Մենք միշտ և կատարելապէս զիտակցօրէն խուսափել ենք այդ բանից: Որովհետև դուք Երկրի վրայ շարունակ Լուսնի միայն մի կողմն էք տեսնում, ուստի մենք մեր գոյութիւնը ձեզ չը յայտնելու համար, երբէք չենք կառուցանում

դէպի ձեզ դարձած կողմի վրայ շինութիւններ, որոնք չը պիտի ծածկուէին ձեր աստղաբաշխներից հեռադիտակի միջով: Մենք բաւականանում ենք ապրելով այն կողմի վրայ, որ ձեզ հանդիպակաց է, և ձեզ թողնում ենք այն համոզման մէջ, որ պէս թէ ձեր Երկրի ուղեկիցը, որի մասին միշտ այն կարծիքի էք, թէ նա նրա ծառան է, բնակչութիւն չունի և ներկայացնում է մի անապատ:

«Ի՞նչ ես անում դու, Լուսին, Երկնքի վրայ,  
ինձ ասա,

Ի՞նչ ես անում դու, անխօս անմուռն շ Լուսին...  
ինձ ասա,

Եւ յայտնիր, սէր ես այդպէս սլանում, անմահ  
Լուսատու»:

Այդպէս երկչոտութեամբ հարցնում է ձեր բանաստեղծ Լէօնարդին, բայց մենք չենք ցանկանում պատասխանել նրան:

— Բայց թէ ինչո՞ւ համար, — գոչեցի ես վերաւորուած. — ինչո՞ւ դուք այդքան եսասէր էք:

— Որովհետև մենք լիովին համաձայնութեան մէջ գտնուելով այն բոլոր մոլորակների հետ, որտեղ անսահման կերպով թագաւորում են կուլտուրականութիւնը, ազատութիւնն ու հաւասարութիւնը, վճռել ենք հաղորդակցութեան մէջ չը մտնել Երկրի հետ, նրան հանդիստ ու ինքն իրան թողնելով: Այդ բոլորը մենք վճռեցինք զիտական նպատակով, այն է՝ ցանկալով նայել, թէ



մինչև ուր կարող է հասնել ինքն իրան թող-  
նուած մարդկութիւնը:

Մենք ապշութիւնից համրացել էինք:

— Սակայն, — ասաց Րատալանգան, — ինչ  
պէս...

Գողցրաբարոյ բարեացակամութիւնը նորից  
արտափայլեց լուսնաբնակչի գէմքի վրայ և նա  
ասաց.

— Ի՞նչ արած, որ այդպէս է մեր քմահա-  
ճոյքը: Մենք վերադառնում էինք այցելութիւ-  
նից, որ տուել էինք Արուսեակի բնակիչներին,  
երբ յանկարծ, թռչելով մի քանի քիլոմէթր հե-  
ռաւորութիւնից ձեր Երկրի վրայով, մենք նկա-  
տեցինք ձեր այդ դժբաղտ օդապարիկը, որը, այս-  
տեղ մեր մէջ գտնուող սիրելի կապիտանի ենթա-  
դրութեամբ, միայն մոլորուել էր մրրկալից ամ-  
պերի մէջ: Մենք դիտակով նայում էինք ձեզ...:

— Յետոյ, — հարցրինք մենք արդի թալկու-  
թեամբ:

— Յետոյ մենք ուզում էինք ձեզ թողնել ձեր  
ճակատագրին, երբ յանկարծ երևաց, որ ձեր մէջ,  
այդ մարդկանց խմբակի մէջ, նստած են և «Ի-  
շուկ» թերթի երկու աշխատակիցը:

— Եւ այն ժամանակ:

— Այն ժամանակ մենք վճռեցինք ազատել  
ձեզ և վերցնել մեզ հետ այն միակ մարդկանց,  
որոնք արժանի էին լուսնի վրայ երևալու:

կապիտանը, Ֆինանսիստը և մօնսինեօրը գըր-  
կեցին մեզ անտասուալից աչքերով:

— Ա՛խ, դուք մեր ազատարարներն էք:

Մենք բոլորս ցնցուեցինք մտաբերելով թէ  
նրպիսի սարսափելի վտանգի ենք ենթարկուած  
եղել:

— Այն հարուածը, որ դուք զգացիք, — շա-  
րունակեց պատմել Պենսիլթրօն, — առաջ եկաւ ձեր  
օդապարիկի ընդհարումից մեր օդանաւի հետ:  
Այդ վայրկեանից դուք կորցրիք զգալու ընդու-  
նակութիւնը, իսկ մենք վերցրինք ձեզ և քաշ  
տուինք այստեղ ձեր գունդը, որի վրայ և դուք  
կը վերադառնաք Երկիր:

— Իսկ այդ երբ կը լինի, — հարցրեց Ֆինան-  
սիստը, շատ անհանգստացած հաւանօրէն նրա-  
նով, թէ ի՞նչ է դառնում արդեօք նրա գործա-  
րանի մէջ Տիվօլիում:

— Մեր նաւը թռչում է այնպիսի արագու-  
թեամբ, որ ութ անգամ աւելի է ձեր թնդանօ-  
թային ուղիքի արագութիւնից: Այդ հաշուով, այն  
384,460 քիլոմէթրը, որ բաժանում է Երկիրը  
Լուսնից, մենք կը թռչենք մի օրուայ ընթացքում:

— Դա զարմանալի է:

— Բնաւ այնքան էլ զարմանալի չէ, եթէ  
դուք յիշէք, որ ելէկտրական կայծը այդ տարա-  
ծութիւնը անցնում է մէկուկէս վայրկեանում...:  
Սակայն, — յանկարծ ասաց նա և ձայնը փոխեց, —

մենք թռանք ու հասանք: Հիմա ժամանակ է մեզ հրաժեշտ տալու:

— Արդէն:

Մենք Ս. Պետրոսի տաճարի գմբէթից երեք հազար մեթր հեռաւորութեան վրայ ենք: Ի՞նչքան ձեր օգապարիկի կողովի մէջ:

Արտասուալից աչքերով գրկեցինք ու համբուրեցինք բարի Պենսիէրօյին և օգանաւի նրա ուղեկից մեքենավարներին:

— Եւ դուք չէք վախենում, — հարցրի ես — որ Երկրի վրայ կը նկատեն ձեր թռիչքը:

— Ոչինչ, մեր օգանաւը, եթէ նկատուելու էլ լինի, ծայրայեղ պարագայում օդաքարի տեղ կընդունուի:

— Բայց մեր աստղաբաշխները:

— Օ՛, ձեր աստղաբաշխները և առհասարակ ձեր գիտնականները բնաւ այնքան հեռատես ու շրջահայեաց չեն՝ թոյլ տալու համար տարածութեան մէջ թռչող կենդանի էակների գոյութեան կարելիութիւնը:

— Բայց և այնպէս մեզանում էլ գիտութիւնը մեծ առաջադիմութիւններ է արել:

— Տեսնիքական, իմ թանկագին բարեկամներս, միայն տեսնիքական: Քանի ձեր այդ գիտնականները, կարողանալով ամեն տարի, իրանց հեռագիտակների օգնութեամբ, հազարաւոր նոր աշխարհներ գտնել, շատ աւելի լայնարձակ քան

թէ ձեր հատիկի չափ մանր Երկիրը, միևնոյն ժամանակ կը մնան այն դաւանանքին՝ թէ Երկիրը աշխարհաստեղծութեան կենտրոնն է կազմում. քանի դեռ այդ գիտնականները, դիտելով միգապատ բծերը, ուսումնասիրելով աստղերի կազմութիւնը և իմանալով, թէ այդ բծերը ժամանակի ընթացքում նոր աշխարհների են վերածւում. քանի ձեր բնախոյզը, տեսնելով, թէ ինչպէս մանրագիտակի տակ իր աչքի առաջ դադարում ու նորից վերականգնում են հազարաւոր կեանքեր, իսկ ելեկտրօտեսխիկը, որը միջոց գտնելով սանձահարելու կայծը, ցրուելու մըրկաբեր ամպերը և ազատելով միտքը նիւթական թաղանթից, կարողանում է ստիպել հէնց այդ միտքը տարուել՝ հեռագրի օգնութեամբ երկրագնդի մի ծայրից միւսը. և բնախօսը, որոշելով մարդկային ուղեղում զանազան ընդունակութիւնների բնակատեղիները, և այդ ուղեղի խանգարումների մէջ գտնելով դիպուածական յանցագործութեան պատճառները, մի խօսքով՝ քանի դեռ գիտութիւնը, այդ ամենը գիտնալով, միևնոյն ժամանակ կարող կը լինի ստրուկ կը մնալ մի վարդապետութեան, թէ երկրային մարդիկ ինչ որ առանձին կանխանշանակութիւն ունին տիեզերքի մէջ... այն, մինչև այդ ժամանակ պարզ է, թէ ձեր բոլոր գիտութիւնը, իր վերլուծումներով այնքան հպարտացող, չէ կա-

րող բնաւ ի մի կապակցել ու զուգադրել իր բոլոր մեծամեծ գիւտերի հետեանքները, և չէ կարող խելահասու լինել այն բանին, ինչ որ տակաւին անյայտ է իրան: Այդ բանի համար ձեր գիտութեանը պակասող ամեն ինչի բանալին՝ միայն համադրութիւնն է (սինթէզը)...: Տիրեցէք նրան, և ձեզ կը բացուի «Աշխարհաստեղծութեան այն հօր գաղտնիքը», որ ձեզ այնքան վախեցնում է, և չընայելով «Կօսմօս»-ի <sup>1)</sup> հեղինակի մտքի զօրեղ թռիչքին, այդ գաղտնիքը ձեզ հարկադրում է ծունկ խոնարհելու հոռմէական հոգևոր պետի հողաթափների առաջ, որի գահի մօտ, ձեր կարծիքով, սկսում ու վերջանում են մարդկութեան բոլոր ճակատագիրները...

— Ուրեմն, ոչ մի ամենափոքր յոյս չը կ'սյ, որ մեր միտքը իբրևիցէ ազատութիւն կը գտնէ:

— Երբէք, քանի դուք կը մնաք ձեր մտաւոր ու հոգեկան բանտի որմերի մէջ...: Դուք աւելի շուտ կը վերադառնաք անցեալին, աւելի շուտ կը հրաժարուէք գիտութեան բոլոր յաջողութիւններից և կը վերադառնաք սպիրիտիզմին, ինչպէս արդէն այժմ դուք վերադառնում էք նրան, կարծես տեսնելով նրանում ձեզ ճըն-

<sup>1)</sup> «Կօսմօս» (Տիեզերք), Ալէքսանդր Հոմբօլտի յայտնի հեղինակութիւնը:

շող շղթաներից ազատում, բայց հէնց նրանով դուք միայն աւելի պինդ էք ամրացնում ձեր շղթաները...: Սակայն ժամանակ է, իմ թանկագին, ըոպէական իմ դժբաղատ բարեկամներ: Գրե՛նաք բարձր:

Վերջին հրաժեշտի ողջոյնի հետ մենք իջանք մեր օդապարիկը, իսկ լուսնաբնակիչները նաւը մի շրջադարձ արեց, պատրաստուելով տարածութեան մէջ թռչելու:

— Ուրեմն, — գոչեցի ես յուսահատաբար, մինչ մեր օդապարիկը սահուն կերպով սկսեց բարձրանալ, — դուք այնու ամենայնիւ պիտի յամառէք այն բանում, որ մեր երկիրը ցուցանք մնայ և ըստ առաջնոյն ծառայէ տիեզերքի գիտնականների համար իբր զննութիւնների առարկայ:

— Դա վճռուած բան է, — ձայն տուեց Պենսիլէրօն: — Գոնէ այդ այդպէս է լինելու մինչև այն օրը, երբ ձեզ համար էլ կը ծագէ ազատութեան արշալոյսը: Յիշեցէք ձեր խոստումը: Լճու մնացէք:

— Կեցցէ՛ ազատութիւնը:

— Թող կեցցէ՛ նա, — պատասխանեց Պենսիլէրօն:

Այդ խօսքերով օդանաւը անհետացաւ անծայր երկնագոյն հեռաւորութեան մէջ:

Մենք ուզում էինք մեր տուած խոստումը  
սրբութեամբ պահել, բայց դեռ Մօնտէմատորիօ  
չէինք իջել, որ մօնսինեօրը ձեռքերը շփելով,  
յայտնեց մեզ.


— Դուք կարող էք պատմել, ինչ որ կուզէք:  
Ես ձեզ այդ թոյլատրում եմ:


— Բայց ի՞նչպէս: Իսկ երգումը:

— Ես ինքս ձեր բոլորի փոխարէն երգուեցի:

— Լա՛ւ, դրանով ի՞նչ:

— Ես երգումն արտասանեցի... մտքով ու-  
րիշ դարձուածք բանեցնելով:





9062 : 45 307:

904

Հայաստանի Ազգային գրադարան



NL0432385

799

